

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016-2017 ուսումնական տարվա գործունեության

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ,

ՄԳԴ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Վ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երևան -2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ՆԱԽԱԲԱՆ | 3 |
| 1. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | 10 |
| 2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 17 |
| 2.2.Ուսանողների կազմը և շարժը | 27 |
| 2.3.Ուսանողների հաճախումները և առաջադիմությունը..... | 27 |
| 2.4.Ուսումնական բեռնվածությունը | 28 |
| 3.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 35 |
| 3.1. Մանկավարժական պրակտիկա | 49 |
| 3.2. Կլինիկական պրակտիկա..... | 63 |
| 3.3. Մասնագիտական պրակտիկա..... | 65 |
| 3.4. Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկա | 65 |
| 4.ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 89 |
| 5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | 92 |
| 6. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 106 |
| 8 .ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 112 |
| 9.ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 116 |
| 10.ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... | 119 |
| 11.ՍՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 122 |
| 12. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... | 124 |
| 13.ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ | 126 |
| ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 126 |
| 14.ՄԱՐՉԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 128 |
| 15.ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | 133 |
| 16.ԱՐԽԻՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 136 |
| ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 140 |

ՆԱԽԱԲԱՆ

2016-2017 ուստարում բուհում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ. փոխվել է ինստիտուտի կարգավիճակը՝ դառնալով հիմնադրամ (22.09.2016 թ.):

2016 թ. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը հավատարմագրման փորձագիտական հանձնախմբի կողմից ստացավ սերտիֆիկատ (19.10.2016):

2016 թ. բուհում կատարվեց կառուցվածքային արմատական փոփոխություն, որի նպատակն էր՝ ժամանակակից պահանջներին համապատասխան վերակառուցելու բաժինները, ամբիոնները, հստակեցնելու յուրաքանչյուրի գործառույթը (աղյուսակ 1.):

Համաձայն ՀՀ Վարչապետի 2017 թ. հունվարի 19-ի N 39 Ա որոշման՝ ինստիտուտը դարձավ հիմնադրամ, և հաստատվեց հոգաբարձուների խորհրդի նոր կազմը.

ԿԱԶՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ

| | |
|-------------------------|--|
| Արսեն Քարամյան | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ |
| Արման Սահակյան | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ (համաձայնությամբ) |
| Հոկտեն Միրզոյան | ՀՀ ազգային օլիմպիական կոմիտեի փոխնախագահ (համաձայնությամբ) |
| Սարգիս Գրիգորյան | Վարչապետի վերահսկողության բաժնի պետ (համաձայնությամբ) |
| Նառա Շահբազյան | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ) |
| Արկադի Պեպրոյան | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի աշխատակազմի մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության պետ (համաձայնությամբ) |

Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ

| | |
|---------------------------|---|
| Լևոն Զուլֆալայան | ՀՀ հունահռոմեական ըմբշամարտի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ (համաձայնությամբ) |
| Ալբերտ Ազարյան | Երևանի քաղաքապետարանի «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ) |
| Իսրայել Միլիպոսյան | Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան դպրոցի տնօրեն (համաձայնությամբ) |
| Վազգեն Բադալյան | ՀՀ բռնցքամարտի երիտասարդական հավաքականի ավագ մարզիչ (համաձայնությամբ) |
| Արայիկ Մեհրաբյան | «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ) |
| Ռազմիկ Սյրեփանյան | «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ) |

Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ

| | |
|-------------------------|--|
| Միքայել Իսպիրյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Սպորտային մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի պրոֆեսոր (համաձայնությամբ) |
| Գագիկ Սարգսյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ) |

| | |
|-----------------------|---|
| Արամ Գրիգորյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր (համաձայնությամբ) |
| Կոյա Բաբայան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հեռակա ուսուցման բաժնի պետ (համաձայնությամբ) |

| | |
|------------------------|---|
| Գառնիկ Հակոբյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կիրառական մարզաձևերի և լողի ամբիոնի վարիչ (համաձայնությամբ) |
|------------------------|---|

| | |
|-----------------------------|---|
| Հարություն Մելքոնյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնի վարիչ (համաձայնությամբ) |
|-----------------------------|---|

Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ

| | |
|----------------------------|--|
| Քրիստինե Ալեքսանյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի մագիստրանտ |
|----------------------------|--|

| | |
|------------------------|---|
| Արկադի Սարգսյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող |
|------------------------|---|

| | |
|-------------------------|--|
| Դիաննա Մուրադյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրանտ |
|-------------------------|--|

| | |
|----------------------------|---|
| Սյուզաննա Տիգրանյան | Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ֆիզիկական դաստիարակ |
|----------------------------|---|

կության և առողջարարական տեխնոլոգիաների
ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

Ռուբեն Գալստյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պե-
տական ինստիտուտի Սպորտային մանկավարժու-
թյան և կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի
ուսանող

Նորայր Հախոյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտի Սպորտային մանկավար-
ժության և կառավարման ֆակուլտետի 2-րդ կուրսի
ուսանող

2016-2017 հաշվետու տարում ինստիտուտը ղեկավարվել և գործել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գործող կանոնակարգի, բուհի կառավարման և գիտական խորհուրդների, ռեկտորատի որոշումների ու կարգադրությունների համաձայն:

Հիմնադրամի անցնելը, ինստիտուտի կառուցվածքային փոփոխությունները բարձրագույն կրթության բարեփոխումների իրականացման նոր, ավելի ընդարձակ խնդիրներ է առաջադրում ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացման, բոլոր օղակների գործընթացի արդիականացման համար:

Բուհի հիմնական նպատակն է՝ որակի ապահովման և բարձրացման, շահակիցների հետ սերտ համագործակցման, բարձր պրոֆեսիոնալ մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստումը՝ անձի կրթական զարգացման պահանջներին համապատասխան:

Դասավանդվող առարկաների որակի բարձրացման և նորագույն տեխնոլոգիաների ու գիտելիքների հաղորդման, դասախոսներին գիտամեթոդական աշխատանքների մեջ ընդգրկելու ուղղությամբ կատարվել են մեծածավալ աշխատանքներ, որոնք նպաստել են Բոլոնյան հոչակագրի և կրեդիտային-վարկանիշային համակարգի սահուն ընթացքին: Բոլոր ամբիոններում կիրառվել են մանկավարժական և գիտահետազոտական ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիական մոտեցումներ:

Ներկայացված հաշվետվության մեջ ներառված են ամփոփ տվյալներ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի բոլոր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ:

Ստորև ներկայացված է ինստիտուտի վերակառուցման և ղեկավարման բնագավառները (աղյուսակ1):

1. ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2016-2017 ուսումնական տարում ուսումնական, գիտամեթոդական, դաստիարակչական, մարզական, շեֆական, հասարակական աշխատանքներ են կատարել 209 դասախոս, այդ թվում ` 7 գիտությունների դոկտոր, 30 պրոֆեսոր, 37 դոցենտ, 52 գիտությունների թեկնածու: Ուսումնաօժանդակ գործունեություն են կատարել 27 ավագ լաբորանտ, 33 լաբորանտ և կաբինետի վարիչներ: Կադրային ներուժի ցուցանիշները պատկերված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարդկային ռեսուրսների ներուժը

| | Ամբիոնը | Քան. | Պրոֆ. | Դոցենտ | Ասիս. | Դասախ. | Ուսումնա- օժանդակ | Ընդ. |
|-----|--------------------------------|------------|---------------|---------------|---------------|--------------|----------------------|------------|
| 1. | Մարմն. և սպ.պարերի | 10 | 2 | 1 | 5 | 2 | 4 | 13 |
| 2. | Մարզախաղերի | 25 | 3 | 3 | 12 | 7 | 3 | 28 |
| 3. | Կիրառական մարզ. | 17 | 2 | 5 | 5 | 5 | 3 | 20 |
| 4. | Ծանր.,բռնց.,սուսեր. | 11 | 1 | 1 | 6 | 3 | 2 | 13 |
| 5. | Աթլետիկայի | 10 | 2 | 4 | 1 | 3 | 3 | 13 |
| 6. | Ֆիզիոլ.և սպ. բժշկ. | 17 | 2 | 9 | 2 | 4 | 2 | 19 |
| 7. | Լեզուների | 17 | - | - | 15 | 2 | 3 | 20 |
| 8. | Սպորտի մենեջ. և հասարկ. գիտ | 19 | 3 | 3 | 8 | 5 | 3 | 22 |
| 9. | Մանկ.և հոգեբան. | 8 | 2 | 1 | 3 | 2 | 1 | 9 |
| 10. | ՖԴՏ. և մեթոդիկա | 13 | 3 | 3 | 2 | 5 | 1 | 14 |
| 11. | Ըմբշամարտի | 16 | 3 | 1 | 10 | 2 | 2 | 18 |
| 12. | Կինեզիոլոգիայի | 18 | 2 | 3 | 4 | 9 | 2 | 20 |
| 13. | Մարզ.լր. և շախմատ | 9 | 2 | - | 3 | 4 | 1 | 10 |
| 14. | Ադապտիվ ՖԿ և անատոմիայի | 18 | 3 | 2 | 9 | 4 | 2 | 20 |
| | Ընդամենը | 208 | 30 | 36 | 85 | 57 | 31 | 239 |
| | Տոկոս | - | 14,42% | 17,30% | 40,86% | 27,4% | 14,42% | - |

Տարեցտարի մասնագիտական ամբիոններում հզորանում է գիտական ներուժը, սակայն ցածր են հասարակագիտական առարկաների՝ լեզուների, մարզական լրագրության և շախմատի արդյունքները (11-20%):

Բուհի գիտական ու մասնագիտական ներուժի մասին է վկայում այն, որ պրոֆեսորներ Վ. Բ. Առաքելյանը, Ֆ.Գ.Ղազարյանը, Ա.Ա.Չատինյանը, Բ.Զ.Սաղյանը և Լ. Հակոբյանը ԺԳ 00.02 և Հ.Ա.Բաբայանը ԺԹ 00.001 մասնագիտական-թեկնածուական և դոկտորական գիտական խորհուրդների անդամներ են:

Հաշվետու տարում այլ բուհերում պրոֆեսորներ Ֆ. Ղազարյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Բաբայանը, դոցենտ Ա. Գյոզալյանը ղեկավարել են պետական ատեստավորման հանձնաժողովներ:

Պետհամալսարանի Հոգեբանության պետական ատեստավորման հանձնաժողովի անդամ պրոֆեսոր Ս. Հովեյանը, դոցենտներ Ա. Ստեփանյանը և Յու. Գրիգորյանը մասնակցել են Ա. Շիրակացու անվան հանրակրթական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչի ընտրության կոնկուրսային հանձնաժողովի աշխատանքներին:

Պրոֆեսոր Ֆ.Ղազարյանը ղեկավարում է ՀՀ ԿԳՆ առընթեր «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի հանրապետական հանձնաժողովը, որի անդամներն են նաև պրոֆեսոր Ա.Գրիգորյանը, դոցենտներ Յու. Գրիգորյանը և Ա.Գյոզալյանը:

Հաշվետու տարում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հայցորդներ՝ Վարդգես Աբելյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Մ.Ս.Աբրահամյան), Զարուհի Միրիջանյանը (գիտական ղեկավար՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյան), Մուշեղ Նիկոյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյան), Անահիտ Եսայանը (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Ս.Իսախրյան), Արսեն Պապիկյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ս.Հակոբյան) և Գրիգորի Գրիգորյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Ղազարյան):

ԲՈՀ-ը դոցենտի գիտական կոչում է շնորհել Ա. Գյոզալյանին, Կ. Ղազարյանին, Հ. Աղաբեկյանին: Պրոֆեսորի կոչում է շնորհվել Գ. Սարգսյանին:

Հաշվետու տարում բուհի դասախոսներն ու ղեկավար կազմը, ՈԱ բաժինը, Ուսումնական մասը կազմակերպել և մասնակցել են մի շարք միջազգային խորհրդակցությունների ու սեմինարների՝ կապված կրթության համակարգի բարեփոխումների և որակի ապահովման հարցերի հետ: Աղվերանում անցկացվեց եռօրյա միջազգային խորհրդաժողով՝ նվիրված մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության, դասավանդման որակի բարձրացման, դասախոսական կազմի շարունակական գնահատման ընթացակարգերի արդի մոտեցումներին ու պահանջներին:

Աշխատաժողովի գլխավոր հյուրն էր միջազգային փորձագետ Հիլդա Շիլսը, ով ղեկավարում է Բելգիայի Թոմաս Մուր համալսարանական քոլեջի Որակի կառավարման բաժինը: Խորհրդաժողովին մասնակցում էր բուհի պրոֆեսորադասախոսական կազմից ձևավորված աշխատանքային թիմը (Ա. Նուշիկյան, Ա. Գյոզալյան, Գ. Նալբանդյան, Ա. Ստեփանյան, Գ. Մուրադյան, Ս. Դանիելյան, Գ. Սարգսյան, Ռ. Բեգոյան, Մ. Հովսեփյան), որը ներգրավված է նաև բուհի ներքին որակի ապահովման մշտադիտարկման գործընթացներում:

Ապրիլ ամսին Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոնը Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտեի հետ ձեռք բերված համագործակցության համաձայնագրի շրջանակներում կազմակերպեց սեմինար-դասախոսություն «Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանում՝ պարաօլիմպիկ շարժման մասին իրազեկվածության բարձրացման միջոցով»:

2016թ. Վ. Առաքելյանը, Հ. Բաբայանը մասնակցել են Քիշնևում կայացած միջազգային ֆորումի՝ «Օլիմպիական սպորտ և ազգի առողջություն» նշանաբանով:

2017 թ. Վ. Առաքելյանը մասնակցել է «Մանկավարժական համալսարանների միջազգային ասոցացիայի» խորհրդի նիստին:

2016թ. դեկտեմբերին Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի նախաձեռնությամբ ինստիտուտում անցկացվեց «Վարպետության դաս», որը վարեց «Հայկական Փի Ար ասոցիացիա»-ի նախագահ, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս, դոցենտ Աստղիկ Ավետիսյանը:

Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի նախաձեռնությամբ Արարատ-73-ը հավերժացնող հուշարձանի մոտ անցկացվեց «Հայկական սպորտի լուսավոր էջերը» խորագրով թեմատիկ սեմինար-պարապմունք: Ամբողջ աշխարհում դասավանդման և

ուսուցման ավանդական եղանակն անհրաժեշտաբար փոխարինվում են արդիական և նորարարական մոտեցումներով, որոնք մեծապես կնպաստեն ուսանողների գործնական գիտելիքների ամրապնդմանը:

Ֆիզիկական դաստիարակության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս Ս. Խաչատրյանը կազմակերպել էր բաց դաս-միջոցառում՝ ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելման և դրանց դեմ պայքարելու արդյունավետ միջոցները:

Միջազգային այլ գիտական, մեթոդական ու մարզական միջոցառումների են մասնակցել Վ. Բ. Առաքելյանը, Ֆ. Գ. Ղազարյանը, Ա. Ա. Գրիգորյանը, Հ. Ա. Սարգսյանը, Ա. Ստեփանյանը, Ա. Գյոզալյանը, Գ. Նալբանդյանը, Ս. Հովեյանը, Ա. Մարտիրոսյանը, Տ. Պետրոսյանը, Մ. Խաչատրյանը, Լ. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Հարությունյանը, Ա. Չատինյանը, Ա. Օհանջանյանը:

2016 թվականի նոյեմբերի 14-17-ը կայացավ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 43-րդ միջազգային գիտամեթոդական գիտաժողովը՝ «Սպորտային մանկավարժական գիտություն» խորագրով: Համաժողովում լսվել է 20 զեկուցում: Դրանց քննարկումներին մասնակցել են ինչպես ինստիտուտի, այնպես էլ հանրապետության այլ բուհերի դասախոսներ, մագիստրանտներ, հայցորդներ:

Գիտաժողովին նախորդել է 43-րդ միջազգային գիտաժողովի ժողովաձուլի լույսընծայումը՝ բաղկացած 492 էջից, որում տեղ են գտել 84 հայերեն և 23 ռուսերեն գիտական աշխատանքներ:

Ինստիտուտի ամբիոններում և այլ բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմից Միջազգային 43-րդ գիտամեթոդական համաժողովին ներկայացված զեկուցումների վերաբերյալ տվյալները ներկայացված են 3-րդ աղյուսակում:

| N ^o | Ֆակուլտետ, ամբիոն | Թիվը | | Քանակը | |
|---|---|------------|---------------------------|--------------------------|-------------------|
| | | Դասախոսներ | ԳՀԱ-ով զբաղվող դասախոսներ | Ներկայացված գիտ. նյութեր | Զեկուցված նյութեր |
| Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետ | | | | | |
| 1. | Ադապտիվ ՖԿ և անատոմիայի | 10 | 9 | 8 | - |
| 2. | Աթլետիկայի | 11 | 11 | 3 | 1 |
| 3. | Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության | 18 | 14 | 7 | 2 |
| 4. | Կինեզիոլոգիայի | 15 | 6 | 3 | - |
| 5. | Լեզուներ | 7 | 5 | 6 | 1 |
| 6. | Մարզախաղերի | 16 | 16 | 4 | 1 |
| 7. | ՖԴՏ և մեթոդիկայի | 13 | 9 | 5 | 1 |
| Ընդամենը ֆակուլտետում | | 90 | 70 | 36 | 6 |
| Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետ | | | | | |
| 1. | Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների | 18 | 17 | 10 | 2 |
| 2. | Ըմբշամարտի | 19 | 9 | 2 | - |
| 4. | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | 9 | 9 | 5 | 2 |
| 5. | Կիրառական մարզաձևերի | 10 | 6 | 5 | 1 |
| 6. | Ծանրամարտի, բռնցքամարտի, սուսերամարտի | 11 | 11 | 7 | 2 |
| 7. | Մարզական լրագրության և շախմատի | 7 | 7 | 2 | 1 |
| 8. | Մագիստրատուրայի բաժին | | | 2 | 2 |
| Ընդամենը ֆակուլտետում | | 74 | 59 | 33 | 10 |
| Այլ կազմակերպություններից | | | | | |
| 1. | Խ. Արուսյանի անվան պետական մանկավարժական համալսարան | | | 2 | |
| 2. | Արցախի պետական համալսարան | | | 3 | |

Աղյուսակ 3-ի շարունակություն

| | | | | | |
|-----|--|--|--|-----------|--|
| 3. | Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ | | | 3 | |
| 4. | Հայաստանի պետ. տնտ. համալսարան | | | 4 | |
| 5. | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | | | 1 | |
| 6. | ՀՊՃՀ /Պոլիտեխնիկ/ | | | 5 | |
| 7. | Երևանի պետական համալսարան | | | 3 | |
| 8. | Հայաստանի ազգային ագրարային համալսարան | | | 1 | |
| 9. | Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ | | | 1 | |
| 10. | Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | | | 2 | |
| 11. | Վոլգոգրադի ֆիզիկական կուլտուրայի պետական ակադեմիա | | | 1 | |
| 12. | Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտրոն | | | 1 | |
| 13. | Սիբիրի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարան | | | 1 | |
| 14. | Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական մանկավարժական համալսարան | | | 1 | |
| 15. | Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական համալսարան | | | 1 | |
| 16. | Հայաստանում ֆրանսիական համալսարան | | | 1 | |
| 17. | Երևանի 189 դպրոց | | | 1 | |
| | Ընդամենը | | | 37 | |

ԱՖԿ և անատոմիայի ամբիոնի դասխոսները մասնակցել են ՀՀ բուհերում ներառական կրթական հարցերը հանրապետական սեմինարներին (Ս. Հովեյան, Գ. Պապանյան, Ա. Պատվականյան), բացի այդ մեր բուհի մի շարք դասախոսներ մասնակցել են

միջազգային խորհրդակցությունների՝ նվիրված ներառական կրթության ժամանակակից հիմնախնդիրներին (Ա. Գրիգորյան, Ս. Հովեյան, Յու Գրիգորյան և այլք):

Բուհի ողջ կոլեկտիվն ակտիվորեն մասնակցել է «ԷԲՍՊՈ» կրթությունը 21-րդ դարում միջազգային ցուցահանդեսում:

2016 թ. բուհի ռեկտոր Վ. Առաքելյանն ընտրվեց Մոլդովայի սպորտի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, իսկ 2001 թ. Մոսկվայում կայացած «Մանկավարժական համալսարանների միջազգային խորհրդի» նիստում նրան շնորհվեց Բուհական կրթության համակարգում առաջավոր ներդրումների պատվո նշան:

Հաշվետու տարում երկկողմանի համագործակցության պայմանագրեր են կնքվել Վրաստանի, Բելգիայի Թոմաս Մորի անվան համալսարանական քոլեջի, Վոլգոգրադի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բուհերի, Արցախի պետական համալսարանի միջև:

Բուհի բազայում 2016-2017 ուստարում վերապատրաստման դասընթացներ են անցել 127 մարզիչներ՝ 16 մարզաձևերից:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2.1 Ընդհանուր դրույթներ

2016-2017 ուսումնական տարում ինստիտուտի ուսումնական մասն անվանակոչվեց «Ուսումնական բաժին», որը աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով ղեկավարվել է կառավարության, կրթության և գիտության նախարարության փաստաթղթերով, ինստիտուտի հավատարմագրման փորձագիտական զեկույցում տեղ գտած թերությունների վերացման ժամանակացույցի պահանջներով, ինստիտուտի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով:

Վերանայվել և կատարելագործվել են ուսումնական պլանները՝ ըստ դեկանատների և ամբիոնների ներկայացրած հայտերի:

Ամբողջացվել են հայերենով կազմված առարկայական ծրագրերը (335 ծրագիր), թարգմանվել են ռուսերեն, ավարտին է մոտենում անգլերեն տարբերակը (առկա, հեռակա և մագիստրատուրա):

Վերանայվել և կազմվել է հայցորդների, ասպիրանտների, դոկտորանտների համար ուսումնական պլանով նախատեսված ծրագրերը:

Ինստիտուտի ընթերցասրահում սկսվել են առարկայական ծրագրերի, դասախոսությունների և գործնական պարապմունքների ուսանողներին հաղորդվելիք նյութերի տեքստերի էլեկտրոնային տարբերակով շտեմարանի ստեղծումը: Գրեթե ավարտված է մասնագիտական գրականության էլեկտրոնային տարբերակով շտեմարանի ստեղծման գործընթացը:

Երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել և շուրջտարին անցկացվել են որակավորման բարձրացման դասընթացներ (աղյուսակ 4).

Տարվա ընթացքում անցկացվել է կառավարման խորհրդի կազմի հաստատում՝ կապված հիմնադրամի կարգավիճակի անցնելու հետ, ինչպես նաև գիտական խորհրդի 11, ռեկտորատի 19-ը նիստեր:

2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Դասախոսի անուն-ազգանուն | Թեմատիկան | Ժամկետը |
|----|------------------------------------|---|----------------|
| 1. | Գ. Սարգսյան իրավաբան | Իրավական գործառույթները և ինստիտուտի կառուցվածքային փոփոխությունները՝ կապված հիմ- նադրամի հետ | 10.10.2016թ. |
| 2. | Ա. Գյոզալյան Մ.գ.թ., դոցենտ | Գնահատումը Բոլոնյան գործընթա- ցի շրջանակներում | 2.11.2016թ. |
| 3. | Ա. Չատինյան Մ.գ.դ., պրոֆեսոր | Բարձրագույն դպրոցում դասախո- սության կազմակերպման ժամա- նակակից տեխնոլոգիաները | 23.11.2016թ. |
| 4. | Գ. Պապանյան ասիստենտ | Ադապտիվ ֆիզիկական կուլտու- րայի արդի հիմնախնդիրները | 10.02.2017թ. |
| 5. | Ս. Գրիգորյան Բ.գ.դ., պրոֆեսոր | Մարզիկների մկանային համա- կարգի զարգացման տեխնոլոգիա- ները | 15.03.2017թ. |
| 6. | Հ. Բաբայան Հ.գ.թ., պրոֆեսոր | Հոգեբանական պատրաստության ինովացիոն մեթոդների կիրառումը մարզման գործընթացում (բարձրակարգ մարզիկների օրինակով) | 6.04.2017թ. |
| 7. | Ա. Չառաֆյան ասիստենտ | «Բոբթի» մեթոդը ռեաբիլիտացիա- յում | 21.04.2017թ. |

2016-2017 ուստարում հիմնադրամի կանոնակարգով ռեկտոր է ընտրվել պրոֆեսոր Վ. Առաքելյանը:

Ուսումնական աշխատանքների որակը բանձրացնելու նպատակով յուրաքանչյուր կիսամյակի համար պլանավորվել է անցկացնել բաց դասերի և փոխադարձ դասալսումների պլաններ, որին ներգրավվել են ամբիոնների վարիչներ, բազմամյա մանկավարժական փորձ ունեցող պրոֆեսորներ և դոցենտներ:

Որպես կանոն՝ բոլոր դասալսումները քննարկվել են, տրվել է գրավոր մասնագիտական կարծիք, որը պահվում է ուսումնական բաժնում: Հաշվետու ուսումնական տարում անցկացվել է 45 բաց դաս և 90 փոխադարձ դասալսում (աղյուսակ 5,6,).

Աղյուսակ 5

2016 - 2017 ուստարվա I կիսամյակի բաց դասերի և ներամբիոնային դասալսումների պլան

| h/h | Ամիս, ամսաթիվ | Ամբիոն / առարկա | Կուրս/ խումբ | ժամ | Ֆակ- տետ | Դասախոս | Դասալսող |
|-----|---------------|--|-----------------|-----|-------------|-----------------|-------------------|
| 1. | 16.09 | ՖԴՏ և մեթոդիկա | 3/8 | 3-4 | ՄՄ | Ֆ.Ղազարյան | Ա.Գրիգորյան |
| 2. | 26.09 | Ընթացմարտ /մասնագիտություն/ | 3/4 | 1-2 | ՄՄ | Մ.Ալիխանյան | Յու.Գրիգորյան |
| 3. | 30.09 | ԱՖԿ և անատոմիա /ԱՖԿ տես. և մեթոդիկա | 2/2 | 1-2 | ՄՄ | Ս.Հովեյան | Ա.Մարտիրոսյան |
| 4. | 30.09 | Կինեզիոլոգիա /Մանկական հիվանդությունների կինեզիոթերապիա/ | 3/1-2 | 3-4 | ՄՄ | Ա.Մուրադյան | Մ.Ասատրյան |
| 5. | 11.10 | Բոնցքամարտ /Մասնագիտություն/ | 2 | 3-4 | ՄՄ | Հ.Թամիրյան | Գ.Սարգսյան |
| 6. | 14.10 | Սպորտի մանկավարժ. և հոգեբանություն | Մագ. | 3-4 | | Ա.Չատինյան | Ա.Ա.Հարությունյան |
| 7. | 18.10 | Մարզ.լրագր.և2/մ /Սփյուռքահայ մամուլի պատմ./ | 3 | 3-4 | ՄՄ | Ս.Ղարաբաղցյան | Ա.Գրիգորյան |
| 8. | 19.10 | Մարզախաղեր /Սեղանի թենիս, մասնագիտ | 2 | 5-6 | ՄՄ | Ռ.Բեգոյան | Ա.Պողոսյան |
| 9. | 19.10 | Ընտրված մարզաձևի տես. և մեթ. /Լող/ | 3/2 | 1-2 | ՄՄ | Ա.Հակոբյան | Ե.Հակոբյան |
| 10. | 20.10 | Ընտրված մարզաձևի տես. և մեթ. /Դահ.սպ./ | 1/8 | 5-6 | ՄՄ | Ա.Տիրացույան | Գ.Սարգսյան |
| 11. | 25.10 | Ֆիզիոլոգիա և սպ.բժշկ. /Ֆիզիոլոգիա/ | Մագ. | 5-6 | | Լ.Ստեփանյան | Ֆ. Ղազարյան |
| 12. | 27.10 | Ընթացմարտ /մասնագիտություն/ | 2/3 | 1-2 | ՄՄ | Ի.Բաղդասարյան | Վ.Մամաջանյան |
| 13. | 01.11 | Կիրառ.մարզաձևեր /Քաղ.պաշտ. և արտ.իրավ.հիմ./ | 1/6 | 3-4 | ՄԱ | Կ.Թումոյան | Ա.Մարտիրոսյան |
| 14. | 03.11 | Մարմնամարզ. և սպ.պարեր | 3/3-4 | 3-4 | ՄԱ | Գ.Ղարիբյան | Ա.Գյոզալյան |
| 15. | 04.11 | Մարզ.լրագր.և 2/մ /Հետաքննական լրագրութ./ | 4 | 3-4 | ՄՄ | Հ.Հարությունյան | Ա.Անդիկյան |

| | | | | | | | |
|-----|-------|--------------------------------------|-------|-----|----|---------------|-------------|
| 16. | 10.11 | Մարմնամարզ. և սպ.պարեր | 3/6-7 | 5-6 | ՄՄ | Մ.Մարգարյան | Ա.Ստեփանյան |
| 17. | 15.11 | Բոնցքամարտ /Մասնագիտություն/ | 4 | 1-2 | ՄՄ | Վ.Ներսեսյան | Ն.Սելումյան |
| 18. | 24.11 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 4 | 3-4 | ՄՄ | Գ.Սեդրակյան | Գ.Սարգսյան |
| 19. | 25.11 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտություն | 2 | 1-2 | ՄՄ | Ս.Հակոբյան | Ա.Ստեփանյան |
| 20. | 05.12 | Աթլետիկա /Մասնագիտություն/ | 1 | 3-4 | ՄՄ | Վ.Սմբատյան | Ե.Հակոբյան |
| 21. | 09.12 | ՖԴՏ և մեթոդիկա | 3/6-7 | 1-2 | ՄՄ | Յու.Գրիգորյան | Ս.Հովեյան |

Ն եր ա մ բ ի ո ն ա յ ի ն դ ա ս ա լ ս ու մ ն եր

| h/h | Ամիս, ամսաթիվ | Ամբիոն / առարկա | Կուրս/ խումբ | ժամ | Ֆակ-տետ | Դասախոս | Դասալսող |
|-----|---------------|---|--------------|-----|---------|-----------------|----------|
| 1. | 13.09 | Ընթացմարտ /Մասնագիտություն/ | 3/5 | 1-2 | Մ/մ | Վ.Մխիթարյան | |
| 2. | 14.09 | Մարզ.լրագր.ևշ/մ /Մամուլի ժանրեր./ | 1/1 | 1-2 | Մ/մ | Լ.Հարությունյան | |
| 3. | 19.09 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտություն/ | 1 | 3-4 | Մ/ա | Վ.Շմավոնյան | |
| 4. | 20.09 | Մարզ.լրագր.ևշ/մ /Մարզ.լրագր.հիմունքներ/ | 1/1 | 3-4 | Մ/մ | Ա.Բաղդասարյան | |
| 5. | 26.09 | Սպ.մենեջ.և հասարակականգիտ./Հայոցպատմ./ | 1/2-3 | 3-4 | Մ/մ | Գ.Նիկողոսյան | |
| 6. | 26.09 | Լեզուներ /Հայոց լեզու/ | 1/2 | 1-2 | Մ/մ | Ա.Բաղասյան | |
| 7. | 27.09 | Ընտրված մարզաձևի տես. և մեթ. /Փրկ. գործ/ | 2/8 | 3-4 | Մ/մ | Լ.Մովսիսյան | |
| 8. | 28.09 | Կինեզիոլոգիա / Ի բուժ.օգնություն/ | 4/1-2 | 1-2 | Մ/ա | Մ.Քարամյան | |
| 9. | 29.09 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/1 | 1-2 | Մ/մ | Ա.Բարսեղյան | |
| 10. | 29.09 | Ընթացմարտ /Մասնագիտություն/ | 4/5 | 5-6 | Մ/մ | Գ.Ղալեչյան | |
| 11. | 30.09 | Մարզ.լրագր.ևշ/մ /ՏՀՏևհասարակություն/ | 4/1 | 3-4 | Մ/մ | Գ.Մուրադյան | |
| 12. | 03.10 | Սպ.մենեջ.և հասարակական գիտ./Հայոց պատմ./ | 1/1 | 1-2 | Մ/մ | Ն.Գևորգյան | |
| 13. | 03.10 | Լեզուներ /Օտար լեզու/ | 3/1 | 3-4 | Մ/մ | Գ.Սահակյան | |
| 14. | 06.10 | Բոնցքամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | Մ/մ | Ա.Մելքումյան | |
| 15. | 07.10 | Աթլետիկա | 1/2-3 | 1-2 | Մ/մ | Գ.Կարապետյան | |
| 16. | 07.10 | Սպ.մենեջ.և հասարակ. գիտ. /Տնտեսագիտ./ | 4/2-3 | 1-2 | Մ/ա | Ն.Հովհաննիսյան | |
| 17. | 10.10 | Սպորտի մանկավարժ. և հոգեբան. /Մանկավարժ./ | 2/2-3 | 3-4 | Մ/մ | Ս.Արզաքանյան | |
| 18. | 10.10 | Մարզ.լրագր.ևշ/մ /Հեռուստառադիոլրագր./ | 2/1 | 5-6 | Մ/մ | Հ.Մարտիրոսյան | |
| 19. | 10.10 | Սպ.մենեջ.և հասարակական գիտ./Քաղաքագիտ./ | 4/3-4 | 1-2 | Մ/մ | Կ.Քոչարյան | |
| 20. | 10.10 | Բոնցքամարտ /Մասնագիտություն/ | 3 | 1-2 | Մ/մ | Ս.Կարապետյան | |
| 21. | 11.10 | Ընթացմարտ /Մասնագիտություն/ | 1/4 | 5-6 | Մ/մ | Մ.Մակարյան | |

| | | | | | | | |
|-----|-------|--|-------|-----|-----|----------------|--|
| 22. | 11.10 | ՖԴՏ և մեթոդիկա | 2/1 | 1-2 | Մ/ա | Ս.Խաչատրյան | |
| 23. | 11.10 | ԱՖԿ և անատոմիա /Անատոմիա/ | 1/4 | 3-4 | Մ/ա | Ն.Մկրտչյան | |
| 24. | 12.10 | Մարզախաղեր /Վոլեյբոլ, մասնագիտություն/ | 4 | 3-4 | Մ/ա | Գ.Ամբարյան | |
| 25. | 17.10 | Աթլետիկա | 2/1-2 | 5-6 | Մ/ա | Է.Մարտիրոսյան | |
| 26. | 17.10 | Կինեզիոլոգիա / Առողջարարական ֆիզկուլտ./ | 2/1-2 | 1-2 | Մ/ա | Ա.Օհանջանյան | |
| 27. | 20.10 | Սպ. մենեջ.և հասարակ.գիտ./Փիլիսոփայություն/ | 2/6-7 | 3-4 | Մ/մ | Ա.Հովհաննիսյան | |
| 28. | 24.10 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/8 | 1-2 | Մ/մ | Ի.Գրիգորյան | |
| 29. | 25.10 | Սուսերամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | Մ/մ | Ռ.Կարապետյան | |
| 30. | 27.10 | Մարզ.լրագր.ևշ/մ /Խոսքի կուլտուրա/ | 4/1 | 5-6 | Մ/մ | Ժ.Գրիգորյան | |
| 31. | 28.10 | Ֆիզիոլոգիա և սպ.բժշկ. /Առողջ ապրելակ./ | 2/3-4 | 3-4 | Մ/ա | Տ.Աբրահամյան | |
| 32. | 07.11 | Մարզախաղեր /Բասկետբոլ, մասնագիտ./ | 3 | 5-6 | Մ/ա | Դ.Մուրադյան | |
| 33. | 07.11 | Սպ.մենեջ.և հասարակական գիտ./ՖԿ պատմ./ | 1 | 3-4 | Մ/ա | Հ.Ավագյան | |
| 34. | 09.11 | Հրածգություն | 1/2 | 3-4 | Մ/մ | Կ.Գասպարյան | |
| 35. | 10.11 | ՖԴՏ և մեթոդիկա | 3/8 | 1-2 | Մ/մ | Թ.Մկրտչյան | |
| 36. | 14.11 | Սպ.մենեջ.և հասարակական գիտ./Օլիմպ. շարժ/ | 4/1 | 5-6 | Մ/ա | Մ.Իսախիրյան | |
| 37. | 14.11 | Ընթացմարտ /Մասնագիտություն/ | 3/5 | 1-2 | Մ/մ | Վ.Գևորգյան | |
| 38. | 16.11 | Լեզուներ /Հայոց լեզու/ | 1/1 | 1-2 | Մ/ա | Մ.Մալոյան | |
| 39. | 17.11 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 2 | 1-2 | Մ/մ | Զ.Հակոբյան | |
| 40. | 18.11 | Լեզուներ /Օտար լեզու/ | 3/5 | 5-6 | Մ/մ | Գ.Սահակյան | |
| 41. | 18.11 | Ընտրված մարզաձևի տես. և մեթ. /Լող/ | 1/2 | 5-6 | Մ/մ | Վ.Ավթանդիլյան | |
| 42. | 21.11 | Մարզախաղեր /Հանդբոլ, մասնագիտութ./ | 3 | 5-6 | Մ/ա | Ա.Գյուրջիչյան | |
| 43. | 22.11 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | Մ/մ | Վ.Արեվյան | |
| 44. | 24.11 | Սպորտի մանկավարժ. և հոգեբան./Հոգեբանություն/ | 3/8 | 3-4 | Մ/մ | Թ.Սոֆյան | |
| 45. | 29.11 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, ՄՄԿ/ | 1 | 5-6 | Մ/ա | Է.Թորոսյան | |
| 46. | 05.12 | Ընտրված մարզաձևի տես. և մեթ. /Դահ.սպ./ | 3/8 | 1-2 | Մ/մ | Հ.Հայրապետյան | |
| 47. | 07.12 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտութ./ | 2 | 5-6 | Մ/ա | Ն.Էլոյան | |
| 48. | 13.12 | Ֆիզիոլոգիա և սպ.բժշկ. /Ֆիզիոլոգիա/ | 2/1-2 | 5-6 | Մ/ա | Հ.Աղաբաբյան | |

2016 - 2017 ուսումնական տարվա II կիսամյակի բաց դասերի և ներամբիոնային դասալսումների պլան

| h/h | Ամիս, ամսաթիվ | Ամբիոն / առարկա | Կուրս/ խումբ | ժամ | Ֆակ- տետ | Դասախոս | Դասալսող |
|-----|---------------|--|-----------------|-----|-------------|-----------------|---------------------|
| 1. | 07.02 | ԱՖԿ և անատոմիա /ԱՖԿ տես. և մեթոդիկա/ | 1/1-2-3 | 5-6 | ՖԴԱՏ | Լ.Մանուկյան | Մ.Գ. Աղաջանյան |
| 2. | 09.02 | Ըմբշամարտ /մասնագիտություն/ | 1/3 | 5-6 | ՍՄԿ | Վ.Հարությունյան | Մ. Ս. Բարբարյան |
| 3. | 16.02 | Սպ.մենեջ.և հասարակ. գիտութ. /ՖԿ պատմութ./ | 1/4-5 | 3-4 | ՖԴԱՏ | Հ.Ավագյան | Գ.Գ. Սարգսյան |
| 4. | 28.02 | Բռնցքամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | ՍՄԿ | Ա.Մելքումյան | Ա.Ա. Անդիկյան |
| 5. | 01.03 | Ֆիզիոլոգիա և սպ.բժշկ. /Ֆիզիոլոգիա/ | 2/1-2 | 1-2 | ՖԴԱՏ | Հ.Աղաբաբյան | Վ.Մ.Մամաջանյան |
| 6. | 06.03 | Սպորտի մանկավարժ. և հոգեբանության /Հոգեբանություն/ | | 1-2 | Մագ | Հ.Ա.Բաբայան | Տ. Ռ.Պետրոսյան |
| 7. | 07.03 | Սպ.մենեջ.և հասարակ. գիտ/Հայոց պատմ./ | 1/4-5 | 3-4 | ՍՄԿ | Ն.Գևորգյան | Ա.Գ.Ստեփանյան |
| 8. | 09.03 | ՖԴՏ և մեթոդիկա | 2/6-7 | 5-6 | ՍՄԿ | Ե.Ս.Հակոբյան | Ա.Ա.Չառնիկյան |
| 9. | 15.03 | Մարզախաղեր /Վոլեյբոլ, մասնագիտություն/ | 2 | 5-6 | ՖԴԱՏ | Կ.Ասմարյան | Յու. Ե. Կուպայան |
| 10. | 16.03 | Մարզ.լրագր.և շ/մատի /Այլընտրանքային մեդիա/ | 4/1 | 1-2 | ՍՄԿ | Գ. Մուրադյան | Ա.Գ.Գյոզալյան |
| 11. | 16.03 | Կիրառակ.մարզաձևի տես. և մեթ. /փրկարար գործ/ | 4/4 | 3-4 | ՍՄԿ | Ս.Դանիելյան | Յու.Գ. Գրիգորյան |
| 12. | 22.03 | Սպ.մենեջ.և հասարակ. գիտ. /ՖԿ անձ.կառ./ | | 3-4 | Մագ | Ա.Գ.Գյոզալյան | Ե.Ս.Հակոբյան |
| 13. | 28.03 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 2 | 3-4 | ՍՄԿ | Զ.Հակոբյան | Ս.Մ.Թորոյան |
| 14. | 29.03 | Կինեզիոլոգիա / Մերսման հիմունքներ/ | 2/1-2 | 5-6 | ՖԴԱՏ | Ա.Մարտիրոսյան | Մ.Ռ. Ասատրյան |
| 15. | 30.03 | Մարմնամարզ. և սպ.պարեր | 2/2-3 | 3-4 | ՍՄԿ | Ս.Գալսյան | Ա. Ա.Դանիելյան |
| 16. | 04.04 | Կիրառական մարզաձևի տես. և մեթ. /Լող/ | 4/2 | 1-2 | ՍՄԿ | Ի.Սաֆարյան | Բ.Զ. Սաղյան |
| 17. | 04.04 | Սուսերամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | ՍՄԿ | Ռ.Կարապետյան | Կ. Գասպարյան |
| 18. | 17.04 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/5 | 5-6 | ՖԴԱՏ | Զ.Մ.Գրիգորյան | Գ.Ա.Մուրադյան |
| 19. | 17.04 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտություն/ | 1 | 3-4 | ՖԴԱՏ | Մ.Նիկոյան | Ա.Գ.Գյոզալյան |
| 20. | 20.04 | Կիրառական մարզաձևի տես. և մեթ. /Հեծանիվ./ | 1/8 | 5-6 | ՍՄԿ | Ա.Գյոզալյան | Ա.Գ.Ստեփանյան |
| 21. | 26.04 | Ըմբշամարտ /մասնագիտություն/ | 3/5 | 1-2 | ՍՄԿ | Ա.Ղարախանյան | Վ.Մ.Մամաջանյան |
| 22. | 27.04 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 1 | 5-6 | ՍՄԿ | Վ.Աբելյան | Ն.Վ.Սելումյան |
| 23. | 28.04 | Մարմնամարզ. և սպ.պարեր | 2/8 | 5-6 | ՍՄԿ | Ա.Աբրահամյան | Ա. Գ. Հարությունյան |
| 24. | 15.05 | Աթլետիկա /Մասնագիտություն | 1 | 3-4 | ՖԴԱՏ | Է.Մարտիրոսյան | Ա. Ա. Հարությունյան |

Ն եր ա մ ք ի ո ն ա յ ի ն դ ա ս ա լ ս ու մ ն եր

| h/h | Ամիս, ամսաթիվ | Ամբիոն / առարկա | Կուրս/ խումբ | ժամ | Ֆակ- տետ | Դասախոս | Դասալսող |
|-----|---------------|---|--------------|-----|----------|-----------------|-----------------------------|
| 1. | 09.02 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 4 | 3-4 | ՍՄԿ | Գ.Սեդրակյան | |
| 2. | 15.02 | ՖԴՏ և մեթոդիկա | 4/2-3 | 1-2 | ՖԴԱՏ | Ա.Հ.Շախյան | |
| 3. | 21.02 | Մարզ.լրագր.և շ/մ /Մարզական լրագր. հիմ./ | 1/1 | 3-4 | ՍՄԿ | Ա.Բաղդասարյան | Գ.Մուրադյան |
| 4. | 22.02 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/1 | 5-6 | ՍՄԿ | Ա.Բարսեղյան | Զ.Գրիգորյան |
| 5. | 24.02 | Լեզուներ /Հայոց լեզու/ | 1/7 | 1-2 | ՍՄԿ | Ա.Սաֆարյան | Ա.Բաղասյան |
| 6. | 24.02 | Սպ.մենեջ.և հասարակ. գիտ. /Տնտեսագիտ./ | 3/2 | 1-2 | ՖԴԱՏ | Ն.Հովհաննիսյան | |
| 7. | 28.02 | Կինեզիոլոգիա / Մերսման հիմունքներ./ | 4/3-4 | 3-4 | ՖԴԱՏ | Ա.Մանուկյան | |
| 8. | 28.02 | ԱՖԿ և անատոմիա /ԱՖԿ տես. և մեթոդիկա | 1/3 | 1-2 | ՖԴԱՏ | Գ.Պապանյան | |
| 9. | 01.03 | Սպ.մենեջ.և հասարակ.գիտ. /Փիլիսոփայություն/ | | 1-2 | Մագ | Ա.Հովհաննիսյան | |
| 10. | 02.03 | Սպ.մենեջ.և հասարակ. Գիտ./Ֆկ մենեջմենտ/ | | 1-2 | Մագ | Գ.Նիկողոսյան | |
| 11. | 07.03 | ՖԴՏ և մեթոդիկա | 2/6-7 | 1-2 | ՍՄԿ | Ա.Ն.Մանուկյան | |
| 12. | 09.03 | Կիրառական մարզաձևի տես. և մեթ. /Լող/ | 2/2 | 1-2 | ՍՄԿ | Ա.Առաքելյան | |
| 13. | 14.03 | Մարզ.լրագր.և շ/մ /Լրագր. էթիկա/ | 2/1 | 5-6 | ՍՄԿ | Լ.Հարությունյան | Ս.Ղարաբաղցյան |
| 14. | 14.03 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/6 | 3-4 | ՖԴԱՏ | Լ.Գարգալյան | Ի.Գրիգորյան |
| 15. | 14.03 | Ըմբշամարտ /մասնագիտություն/ | 2/5 | 3-4 | ՍՄԿ | Ք.Նաջարյան | Գ.Ղալեջյան |
| 16. | 16.03 | Լեզուներ /Հայոց լեզու/ | 1/9 | 3-4 | ՍՄԿ | Ն.Ավետիսյան | Ծ.Քեչիշյան |
| 17. | 22.03 | Մարզախաղեր /Բասկետբոլ, մասնագիտ./ | 2 | 5-6 | ՖԴԱՏ | Ա.Ստեփանյան | |
| 18. | 26.04 | Մարզ.լրագր. և շ/մ /Հեռուստառադիոլրագրութ/ | 2 | 1-2 | ՍՄԿ | Հ.Մարտիրոսյան | |
| 19. | 27.03 | Սպորտի մանկավարժ. և հոգեբան. /Հոգեբանություն/ | 2/4-5 | 1-2 | ՍՄԿ | Ն. Է.Գևորգյան | Ա.Ա.Չատինյան Ա.Ս.Դավթյան |
| 20. | 28.03 | Բռնցքամարտ /Մասնագիտություն/ | 2 | 3-4 | ՍՄԿ | Հ.Թամիրյան | |
| 21. | 04.04 | Մարզ.լրագր.և շ/մ /Մեդիաուսումնասիր մեթ. / | 4/1 | 5-6 | ՍՄԿ | Գ.Մուրադյան | Ռ.Շատոյան |
| 22. | 04.04 | Աթլետիկա /Մասնագիտություն | 1/4-5 | 1-2 | ՖԴԱՏ | Ա.Նիկողոսյան | Մ.Հայրապետյան |
| 23. | 10.04 | Մարզ.լրագր.և շ/մ /Թարգմանչական գործ/ | 4/4 | 5-6 | ՍՄԿ | Ժ.Գրիգորյան | Ռ.Շատոյան |

| | | | | | | | |
|-----|-------|---|-------|-----|------|-----------------|-----------------------------|
| 24. | 10.04 | Ըմբշամարտ /մասնագիտություն/ | 1/5 | 5-6 | ՍՄԿ | Գ.Ղալեչյան | Ի.Բաղդասարյան |
| 25. | 10.04 | Ծանրամարտ /Մասնագիտություն/ | 3 | 1-2 | ՍՄԿ | Ա.Դանիելյան | |
| 26. | 11.04 | Լեզուներ /Հայոց լեզու/ | 1/8 | 1-2 | ՖԴԱՏ | Ն.Հունանյան | Մ.Մալոյան |
| 27. | 12.04 | Բռնցքամարտ /Մասնագիտություն/ | 3 | 1-2 | ՍՄԿ | Ս.Կարապետյան | |
| 28. | 12.04 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտություն/ | 2 | 5-6 | ՖԴԱՏ | Ն.Էլոյան | |
| 29. | 12.04 | Կիրառական մարզաձևի տես. և մեթ. /Քայ. և ԱԻ հիմունքներ/ | 1/9 | 1-2 | ՍՄԿ | Գ.Ճաղարյան | |
| 30. | 18.04 | Սուսերամարտ /Մասնագիտություն/ | 2 | 3-4 | ՍՄԿ | Հ.Նավասարդյան | |
| 31. | 19.04 | Կինեզիոլոգիա / Առողջարարական ֆիզկուլտ./ | 2/1-2 | 3-4 | ՖԴԱՏ | Գ.Մինասյան | |
| 32. | 25.04 | Սպորտի մանկավարժ. և հոգեբան. /Հոգեբանություն/ | 3/2-3 | 1-2 | ՍՄԿ | Ա. Գ. Ստեփանյան | Հ.Ա.Բաբայան Վ.Ղ.Գեղամյան |
| 33. | 26.04 | Մարզախաղեր /Վոլեյբոլ, մասնագիտ./ | 3 | 1-2 | ՖԴԱՏ | Հ.Ասմարյան | |
| 34. | 27.04 | Լեզուներ /Օտար լեզու/ | 3/5 | 3-4 | ՖԴԱՏ | Ն.Դանիելյան | Ա.Հովսեփյան |
| 35. | 02.05 | Լեզուներ /Օտար լեզու/ | 3/7 | 5-6 | ՍՄԿ | Ա.Մարության | Ա.Հովսեփյան |
| 36. | 03.05 | Աթլետիկա /Մասնագիտություն | 1/4-5 | 1-2 | ՖԴԱՏ | Վ.Սմբատյան | Վ.Համբարձումյան |
| 37. | 03.05 | Մարզախաղեր /Ֆուտբոլ, մասնագիտություն/ | 3 | 3-4 | ՖԴԱՏ | Գ.Թադևոսյան | |
| 38. | 05.05 | Ֆիզիոլոգիա և սպ.բժշկ. /Ֆիզիոլոգիա/ | 2/3-4 | 5-6 | ՖԴԱՏ | Տ.Աբրահամյան | Հ.Ռ.Աղաբաբյան |
| 39. | 08.05 | Մարզախաղեր /Հանդբոլ, մասնագիտություն/ | 3 | 5-6 | ՖԴԱՏ | Ա.Գևորգյան | |
| 40. | 11.05 | Լեզուներ /Ռուսաց լեզու/ | 2/5 | 1-2 | ՖԴԱՏ | Ի.Գրիգորյան | Լ.Գարգալոյան |
| 41. | 13.05 | Ըմբշամարտ /մասնագիտություն/ | 1/4 | 5-6 | ՍՄԿ | Ա.Մարտիրոսյան | Կ.Կիրակոսյան |
| 42. | 22.05 | Կիրառական մարզաձևի տես. և մեթ. /ՍՄԿ փրկարարական գործ/ | 1/9 | 5-6 | ՍՄԿ | Ս.Բիծյան | |

Ամբիոնների կողմից դասալսումներ են անցկացվել նաև՝ համաձայն ներամբիոնային պլանների:

Դեկանների կողմից կազմակերպվել են քննարկումներ՝ կապված դասավանդման որակի հետ, վերլուծվել են ուսումնական բաժնի հաղորդումները՝ ֆակուլտետներում լսած դասերի վերաբերյալ և արվել են համապատասխան եզրահանգումներ:

2016-2017 ուսումնական տարում չի անցկացվել դասախոսների մրցույթ՝ հիմնադրամի գործընթացի հետ կապված:

Ամբիոնների կողմից մշակված գործում է հստակ ծրագիր՝ հավաքական թիմերում ընդգրկված ուսանող-մարզիկների համար, որի հիմնական նպատակն է նրանց հետ

լրացուցիչ դասախոսությունների կազմակերպման, ծրագրային նյութի առանձին բաժինների յուրացումը: Նման աշխատանքի հարուստ փորձը տալիս է իր դրական արդյունքը, իսկ ճանաչողական նպատակով ուսանող մասնակիցների համար կազմակերպվել են թիմային էքսկուրսիաներ, այցելություններ մարզական կազմակերպություններ և մրցավայրեր (մրցումների դիտում, մրցավարություն, կամավորներ):

Ուսանողների անհատական աշխատանքների իրականացման համար ամբիոնի դասախոսներին տրվում է դասաժամեր: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ժամավճարային աշխատողների բեռնվաճության կատարման հսկողությունը և հաշվարկն իրականացնում է Ուսումնական բաժինը՝ ամսվա, կիսամյակային և տարեկան կտրվածքով:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, ըստ ամբիոնների աշխատանքների ծավալի՝ նրանց տրվում է որոշակի ժամաքանակ, որը կազմում է 7000-ից մինչև 20.000 ժամ: Ամբիոնների կողմից ուսումնական բեռնվաճության ժամերը բաշխվում են դասախոսների միջև՝ ըստ դրույքի, գիտական աստիճանի և կոչումի:

Ամբիոնների կատարած ժամերը հաշվարկվում և ներկայացվում են՝ ըստ դասախոսների ներկայացրած հաշվետվության:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա օգոստոս ամսին դասախոսների պլանավորված բեռնվաճությունը հաստատվում է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Գրիգորյանի կողմից:

Հաշվետու տարում բազմաբնույթ աշխատանքներ են տարվել ուսումնական փաստաթղթերի, մատյանների կարգավորման, նորացման և կատարելագործման նպատակով: Փոփոխություններ են արվել տեղեկագրերի ձևերում՝ համապատասխանեցնելով դրանք ռեկտորատի կողմից ընդունված պահանջներին: Մեթոդական խորհրդի նախագահ Գ. Հակոբյանի և պրոֆեսոր Ա. Գրիգորյանի կողմից ուղղումներ և լրացումներ են կատարվել ուսումնական մատյաններում: Կարիերայի և պրակտիկայի բաժնի պետ Մ. Բարբարյանի կողմից թարմացվել են մանկավարժական, կլինիկական և մասնագիտական, գիտամանկավարժական մատյանները և օրագրերը:

Հաջորդ ուսումնական տարվա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրվում են մայիս ամսին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ բավականին դյուրին է դարձել ներինստիտուտային և արտաքին աշխարհի հետ կապը: Կայքի, ֆեյսբուքի էջերում ավելացել է ինֆորմացիան, տեղեկատվությունը:

Հետևողական գործընթաց է իրականացվում երիտասարդ դասախոսների շրջանում՝ բարձրացնելու նրանց մասնագիտական, մանկավարժական, գիտական որակը: Բուհի 14 ամբիոններում աշխատում են 45 երիտասարդ մինչև 35 տարեկան դասախոսներ: Դրանց թիվն առավել մեծ է Կինեզիոլոգիայի (8), Սպորտի մենեջմենտի, մարկետինգի և հասարակական գիտությունների (5), Մարզախաղերի, Կիրառական մարզաձևերի, Ըմբշամարտի, Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի (4-ական), Մանկավարժության և հոգեբանության, Մարզական լրագրության և շախմատի (3-ական), Մարմնամարզության և սպորտային պարերի, Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության (2-ական), Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի, Աթլետիկայի (1-ական) ամբիոններում:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի Ն-752 որոշմամբ՝ անցկացվել է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի 2016-2017 ուստարվա շրջանավարտների հարցազրույց, որի արդյունքում 6-ը հրամանագրվել են հեռակա ուսուցման 2-րդ կուրսում (հր. 720, 15.06.2016 թ.):

Բուհը հիմնադրամի կարգավիճակի անցնելու կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ որոշակի կազմակերպչական և կառուցվածքային փոփոխություններ կատարել: Այսպես՝ ուսումնասիրությունների և դիտարկումների արդյունքում անհրաժեշտություն առաջացավ վերակառուցել ֆակուլտետները և բալանսի բերել ուսանողակազմը՝ ըստ մասնագիտությունների:

Մարզաառողջարարական ֆակուլտետը վերանվանվեց «Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաներ»-ի, որի կազմը համալրվեց Ֆուտբոլ մասնագիտությունը, իսկ Մարզչամանկավարժական ֆակուլտետն անվանափոխվեց «Սպորտային մանկավարժության և կառավարման», որի կազմ տեղափոխվեց Մարզական լրագրության և շախմատի ամբիոնը: Այս փոփոխությունները բալանսի բերեց ֆակուլտետներում ամբիոնների և ուսանողների թվաքանակը: Առանձնացվեց և առանձին միավոր կարգավիճակ տրվեց հեռակա ուսուցման բաժնին: Վերջնականապես կարգավորվեց ուսումնական խմբերի հավասարակշռությունը:

2.2.Ուսանողների կազմը և շարժը

Հաշվետու՝ 2016-2017 ուսումնական տարում բուհում սովորել է 2619 ուսանող, այդ թվում՝ 24 օտարերկրացի: Ցածր առաջադիմության համար բուհից հեռացվել է 33 ուսանող: Ազգային բանակ է զորակոչվել 165 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել է 200 մարդ:

2016-2017 ուստարում բուհն ավարտել է 642 ուսանող, որից 529-ը բակալավր, 113-ը՝ մագիստրանտ, այդ թվում նաև նախորդ տարիների 11 շրջանավարտ:

Բացարձակ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներից ինստիտուտը գերազանցության դիպլոմով ավարտել է 124-ը, որը կազմում է 19,3 %:

Պաշտպանվել է 139 ավարտական աշխատանք:

Ուսանողների կազմի և շարժի վերաբերյալ տվյալները պատկերված են 7-17 աղյուսակներում:

Համապատասխան հաշվետվությունը ներկայացված է առանձին:

2.3.Ուսանողների հաճախումները և առաջադիմությունը

Հաշվետու տարում ուսումնական մասը, ֆակուլտետները, ամբիոնները, որակի ապահովման կենտրոնը նպաստել են հաճախումների ու առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելու համար. անցկացվել են խորհրդակցություններ, զրույցներ, կոնսուլտացիաներ, հաճախումներ ուսումնական խմբեր, հանդիպումներ ծնողների հետ և այլն:

Ամբիոնների հաշվետվությունների մանրակրկիտ ուսումնասիրումն ու վերուծությունը բացահայտեց, որ բուհի կտրվածքով ուսանողների հաճախումները միջինում կազմում է 80-85 տոկոս: Ամբիոնների առումով այստեղ առկա են տատանումներ:

Այսպես՝ մարզախաղերի ամբիոնում այդ ցուցանիշները տատանվում են 85-90 տոկոս, հասարակագիտական առարկաների՝ 75-87 տոկոս, լրդի՝ 60-80 տոկոս, լրագրության՝ 85-98 տոկոս, ՖԴՏ և Մ՝ 75-85 տոկոս, ծանրամարտի՝ 85-93 տոկոս և այլն: Ինչ վերաբերում է հաճախումներին առանձին դասախոսների մոտ, ապա համաձայն հաշվետվությունների՝ շատ ցածր են այդ ցուցանիշները մարմնամարզության ամբիոնի դասախոսների մոտ (Ա.Աբրահամյան՝ 76-80 տոկոս, Մ.Մարգարյան՝ 70-75 տոկոս),

մանկավարժության (Ա.Չատինյան՝ 70 տոկոս, Ա.Ստեփանյան՝ 70 տոկոս), լրագրության (Ա.Մեջլումյան՝ 60 տոկոս), կինեզիոլոգիայի (Ա.Ղարիբյան, Ա.Դունոյան, Մ.Գրիգորյան՝ 72-79 տոկոս) և այլն:

Երկու կիսամյակների կտրվածքով՝ գարնանային և աշնանային, առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ գարնանային առկա՝ 78,9%, հեռակա՝ 69,9%, աշնանային առկա՝ 77,9%, հեռակա՝ 71,6%: Առաջադիմությունը ինչ-որ չափով բարձր է Մարգառողջարարական ֆակուլտետում:

Առանձին առարկաներից հաշվետու տարում գերազանց գնահատականներ՝ 55-75 տոկոսի սահմաններում, գրանցվել է հայոց պատմություն, անատոմիա, կինեզիոլոգիայի հիմունքներ, ԱՖԿ հիմունքներ, մերսման հիմունքներ, ընդհանուր և հատուկ մանկավարժություն, կլինիկական պրակտիկա, մանկավարժական պրակտիկա, հոգեբանություն, էկոլոգիա, վիճակագրություն, փիլիսոփայություն, քաղաքաշտպանություն, մարզական լրագրության հիմունքներ և այլ առարկաներից:

2.4.Ուսումնական բեռնվածությունը

Հաշվետու տարվում 14 ամբիոնների ուսումնական բեռնվածությունն ըստ պլանի կազմել է 160.000 ժամ, սակայն տարբեր պատճառներով այն չի կատարվել 2.300 ժամով: Պլանավորված և կատարված ժամերի պատկերը նկարագրված է 18-րդ աղյուսակում:

Աղյուսակ 18

Բեռնվածության կատարողականի ցուցանիշները

| | Ամբիոնները | Պլան | Կատարողական | Շեղում | |
|----|-----------------------------|-------------|--------------------|---------------|--|
| 1. | Ֆիզիոլոգիայի և սպ. բժշկ. | 13313 | 12964,5 | -348,5 | |
| 2. | Սպորտի մենեջմ. և հաս. գիտ | 15955 | 15817 | -138 | |
| 3. | Կինեզիոլոգիայի | 14415,5 | 14330,6 | -85 | |
| 4. | Ադապտիվ ֆիզիկ. և անատոմիայի | 14192 | 14048,7 | -143 | |
| 5. | Մարզ. լրագր. և շախմ. | 8006,5 | 7982 | -24,5 | |

| | | | | | |
|-----|-----------------------------------|---------------|-----------------|---------------|---------------|
| 6. | Մարզախաղերի | 20548,4 | 20511 | 37 | |
| 7. | Մարմնամ. և սպ. պարեր | 8353,4 | 8318 | -35,4 | |
| 8. | Աթլետիկայի | 7191 | 7170 | -21 | |
| 9. | Ֆիզ. դաս. տես. և մեթոդ | 10710 | 11405,2 | | +695 |
| 10. | Մանկավ. և հոգեբան. | 8914 | 8641 | -273 | |
| 11. | Լեզուների | 11978,5 | 12278 | | +273 |
| 12. | Ըմբշամարտի | 13028,2 | 12716,7 | -311,5 | |
| 13. | Ծանրամ., բռնցքամարտ և սուսերամարտ | 9028,5 | 9139,4 | | +110,9 |
| 14. | Կիրառական մարզ. և լողի | 14112 | 13956 | -156 | |
| | Ընդամենը | 169746 | 169278,1 | 1498,9 | 1078,9 |

Աղյուսակից երևում է, որ առավել մեծ է բեռնվածությունը Ֆիզդաստեսության և մեթոդիկայի (11405,2), Լեզուների (12278), Ծանրամարտի, բռնցքամարտի, սուսերամարտի (9139,4) ամբիոններում:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնական բեռնվածության թերակատարումն ունի իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները, օրինակ՝ Ազգային բանակի զորակոչը, դասախոսների հիվանդությունները, տոնական և ոչ աշխատանքային օրերի առկայությունը և այլն:

Ուսումնական բեռնվածության ամփոփիչ տվյալներն ու թվային ցուցանիշները բերված են 19-րդ աղյուսակում:

Ուսումնական բաժնի աշխատանքների մասին բազմիցս զեկուցվել է ինստիտուտի գիտական խորհրդում, ռեկտորատների նիստերում՝ կապված դասախոսների բեռնվածության կատարման, բեռնվածության բովանդակության, ուսումնական ծրագրերի, աշխատանքների պլանավորման, ուսանողների անձնակազմի և այլ հարցերի հետ:

Աշխատանքային փորձի փոխանակման համար բաժինը համագործակցել է Երևանի պետական համալսարանի, Խ.Աբովյանի հայկական պետական մանկավարժական համալսարանի և այլ բուհերի բաժինների հետ՝ կապված ուսումնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի, ուսանողների հարցման և այլնի հետ:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համաձայն ուսումնական պլանների և սահմանված ժամանակացույցի՝ կազմակերպվել են հետևյալ պրակտիկաները. IV կուրսի սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի 81 ուսանողների և ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի 65 ուսանողների մասնագիտական և կլինիկական՝ հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 12-ը ներառյալ, հեռակա ուսուցման բաժնի V կուրսի 383 ուսանողների և IV կուրսի երեք մարզական լրագրողների մասնագիտական՝ հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 28-ը ներառյալ, առկա ուսուցման III կուրսի չորս ուսանողների ճանաչողական՝ սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 16-ը շաբաթը մեկ օրով (ուրբաթ) և հեռակա ուսուցման IV կուրսի ինը ուսանողների համար հոկտեմբերի 24-ից մինչև 28-ը, մագիստրատուրայի հեռակա ուսուցման 17 ուսանողների գիտամանկավարժական՝ հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 11-ը, և գիտահետազոտական՝ նոյեմբերի 14-ից մինչև 25-ը:

| 18. | Մարմնամարզութ. | 5 | A+ | 95-100 | 4 | | 95.5 | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 1 | | 95.5 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 19. | Մարզ. պարեր | 3 | A+ | 95-100 | 1 | | 94 | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 2 | | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 20. | Ազատ ոճի ըմբշամ. | 9 | A+ | 95-100 | 2 | | 95 | B+ | 85-89 | 2 | | 86 | C+ | 70-79 | 3 | | 74.3 | 2 | | 85.3 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 21. | Հունսահ. ըմբշամ. | 3 | A+ | 95-100 | 1 | | 95 | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | 1 | | 75 | 1 | | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 22. | Ձյուղի | 7 | A+ | 95-100 | 2 | | 90 | B+ | 85-89 | 2 | | 83.5 | C+ | 70-79 | | | | 3 | | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 23. | Սամբո | 3 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | 1 | | 70 | 2 | | 70 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 24. | Կարատե ռի | 11 | A+ | 95-100 | 1 | | 90 | B+ | 85-89 | 3 | | 84.6 | C+ | 70-79 | 1 | | 75 | 6 | | 83.8 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 25. | Ծանրամարտ | 5 | A+ | 95-100 | 1 | | 90 | B+ | 85-89 | 1 | | 82 | C+ | 70-79 | 1 | | 70 | 2 | | 80.6 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 26. | Բնցքամարտ | 12 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | 3 | | 73 | 9 | | 73 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 27. | Փոկար. գործ | 22 | A+ | 95-100 | 4 | | 92.2 | B+ | 85-89 | 5 | | 82.8 | C+ | 70-79 | 3 | | 76.6 | 10 | | 86.6 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 28. | Բազկամ. | 2 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | 1 | | 75 | 1 | | 75 |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | | |
| 29. | Սերամ | 1 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 1 | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|-----|--------------|-----|-------|--------|----|----|------|-------|-------|----|------|------|-------|-------|----|------|----|------|------|
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| 30. | Շախմատ | 2 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | 2 | 100 | 86.5 | C+ | 70-79 | | | | - | - |
| | | | A | 90-94 | - | - | - | B | 80-84 | | | | C | 60-69 | - | - | - | - | - |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 86.5 |
| 31. | ԱՖԿ | 9 | A+ | 95-100 | 3 | 33 | 94.3 | B+ | 85-89 | 2 | 28.5 | 85 | C+ | 70-79 | 2 | 28.5 | | 2 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | 22.2 | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 81.8 |
| 32. | Աթլետիկա | 7 | A+ | 95-100 | 3 | | 97. | B+ | 85-89 | 1 | | 80 | C+ | 70-79 | 1 | | 75 | 2 | |
| | | | A | 90-94 | | | 6 | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 89.6 |
| 33. | Վոլեյբոլ | 5 | A+ | 95-100 | 3 | | 93. | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | 1 | | 70 | 1 | |
| | | | A | 90-94 | | | 3 | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 87.5 |
| 34. | Բասկետ. | 4 | A+ | 95-100 | 2 | | 91 | B+ | 85-89 | 1 | | 80 | C+ | 70-79 | | | | 1 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 91 |
| 35. | Հանդբոլ | 2 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 2 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 36. | Սեղանի թիշու | 2 | A+ | 95-100 | | | | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 2 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 37. | Տուսթբոլ | 10 | A+ | 95-100 | 3 | | 92.6 | B+ | 85-89 | 2 | | 86.5 | C+ | 70-79 | | | | 5 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | 90.2 |
| 38. | Թենիս | 2 | A+ | 95-100 | 1 | | 90 | B+ | 85-89 | | | | C+ | 70-79 | | | | 1 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 39. | Ընդամ. | 129 | A, A+ | | 29 | | | B, B+ | | 21 | | | C, C+ | | 16 | | | 63 | |

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 4-ՐԴ և 3-ՐԴ ԿՈՐՍԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | Մասնագիտություն | Ուս. քանակ | Մ2. տարով | | | | ՄԱԳ | Ն2. տարով | | | | ՄԱԳ | Մ2. տարով | | | | ՄԱԳ | F x n/% | F n/% | ՄԱԳ (ընդհանուր) |
|-----|---------------------|------------|-----------------|--------|---|------|------|-----------------|-------|---|------|------|-----------------|-------|---|------|------|---------|-------|-----------------|
| | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | | | |
| 9. | Կինեզիոլոգ. 4-րդ կ. | 27 | A+ | 95-100 | 8 | 29.6 | 94.6 | B+ | 85-89 | 9 | 33.3 | 84.6 | C+ | 70-79 | 2 | 7.4 | 70.5 | - | - | 88.7 |
| | | | A | 90-94 | 5 | 18.5 | | B | 80-84 | 3 | 11.1 | | C | 60-69 | | | | - | - | |
| 10. | Կինեզիոլոգ. 3-րդ կ. | 46 | A+ | 95-100 | 2 | 45.6 | 96.1 | B+ | 85-89 | 2 | 4.3 | 81.4 | C+ | 70-79 | 1 | 21.7 | 72 | 3 | - | 87.5 |
| | | | A | 90-94 | 4 | 8.6 | | B | 80-84 | 5 | 10.8 | | C | 60-69 | 1 | 2.1 | | - | - | |
| 11. | ԱՖԿ 4-րդ կ. | 1 | A+ | 95-100 | - | - | 90 | B+ | 85-89 | - | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | - | 90 |
| | | | A | 90-94 | 1 | 100 | | B | 80-84 | - | - | | C | 60-69 | - | - | | - | - | |

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ 4-ՐԴ ԿՈՒՐՍԻ ԵՎ 5-ՐԴ ԿՈՐՍԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | Մասնագիտություն | Ուս. քանակ | Մ2. տարով | | | | ՄԱԳ | Ն2. տարով | | | | ՄԱԳ | Մ2. տարով | | | | ՄԱԳ | F x n/% | F n/% | ՄԱԳ (ընդհանուր) |
|----|--------------------|------------|-----------------|--------|---|------|------|-----------------|-------|---|------|-----|-----------------|-------|---|------|------|---------|---------------|-----------------|
| | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | Ռեյտինգ. միավոր | n | % | | | | | |
| 1. | ԱՖԿ 5-րդ կ. | 2 | A+ | 95-100 | 1 | | 98.3 | B+ | 85-89 | 7 | 33.3 | 90 | C+ | 70-79 | 1 | 4.7 | 85 | - | 1 հե- նաց. | 91.5 |
| | | | A | 90-94 | 3 | 61.9 | | B | 80-84 | | | | C | 60-69 | | | | - | - | |
| 2. | Կինեզիոլոգ 4-րդ կ. | 9 | A+ | 95-100 | 2 | 22.2 | 96 | B+ | 85-89 | 2 | 22.2 | 84 | C+ | 70-79 | 3 | 33.3 | 68.7 | - | - | 79.8 |
| | | | A | 90-94 | - | - | | B | 80-84 | 1 | 11.1 | | C | 60-69 | 1 | 11.1 | | - | - | |

Աղյուսակ 14

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 3-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| Մասնագիտություն | Ուս. քանակ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Fx n/% | F n/% | ՄԱԳ (ընդհանուր) |
|-------------------|------------|-----------|-----------------|---|------|------|-----------|-----------------|---|------|------|-----------|-----------------|---|---|-----|--------|-------|-----------------|
| Մարզակ. լրագրութ. | 11 | A+ | 95-100 | 2 | 18.1 | 91.2 | B+ | 85-89 | 3 | 27.2 | 85.6 | C+ | 70-79 | - | - | - | - | - | 89.7 |
| | | A | 90-94 | 6 | 54.5 | | B | 80-84 | - | - | | C | 60-69 | - | - | | - | - | |
| Ընդամ. | 11 | A+, A | | 8 | 72.7 | 91.2 | B+, B | | 3 | 27.2 | 85.6 | C+, C | | - | - | - | - | - | 89.7 |

Աղյուսակ 14-ի շարունակություն

ՎԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺՆԻ 4-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| Մասնագիտություն | Ուս. քանակ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Նշ. տարով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Fx n/% | F n/% | ՄԱԳ (ընդհանուր) |
|-------------------|------------|-----------|-----------------|---|----|-----|-----------|-----------------|---|----|-----|-----------|-----------------|---|---|-----|--------|-------|-----------------|
| Մարզակ. լրագրութ. | 4 | A+ | 95-100 | 3 | 75 | 97 | B+ | 85-89 | 1 | 25 | 87 | C+ | 70-79 | - | - | - | - | - | 94.5 |
| | | A | 90-94 | - | - | | B | 80-84 | - | - | | C | 60-69 | - | - | | - | - | |
| Ընդամ. | 4 | A+, A | | 3 | 75 | 97 | B+, B | | 1 | 25 | 87 | C+, C | | - | - | - | - | - | 94.5 |

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | Մասնագիտություն | Ուս. քանակ | Երկրորդ կուրս | | | | ՄԱԳ | | | | Երկրորդ կուրս | | | | ՄԱԳ | | | | ՄԱԳ (ընդհանուր) | |
|-----|-----------------------|------------|---------------|-----------------|----|-----|-----------|-----------------|-------|----|---------------|-----------------|-------|-------|-----|--------|-------|---|-----------------|------|
| | | | Նշ. տառով | Ռեյտինգ. միավոր | n | % | Նշ. տառով | Ռեյտինգ. միավոր | n | % | Նշ. տառով | Ռեյտինգ. միավոր | n | % | ՄԱԳ | Fx n/% | F n/% | | | |
| 9. | ԱՖԿ | 5 | A+ | 95-100 | 1 | 20 | 100 | B+ | 85-89 | 1 | 80 | 81.2 | C+ | 70-79 | - | - | - | - | 85 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | 3 | | | C | 60-69 | - | | | | | |
| 10. | ԱԴ սպորտ | 2 | A+ | 95-100 | 1 | 100 | 95 | B+ | 85-89 | | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | 95 | |
| | | | A | 90-94 | 1 | | | B | 80-84 | | | | C | 60-69 | - | | | | | |
| 11. | Կինեզիոլոգիա | 25 | A+ | 95-100 | 18 | 88 | 96.2 | B+ | 85-89 | 1 | 8 | 82.5 | C+ | 70-79 | - | 60 | - | - | 93.6 | |
| | | | A | 90-94 | 4 | | | B | 80-84 | 1 | | | C | 60-69 | 1 | | | | | |
| 12. | Սա. և մարզ | 43 | A+ | 95-100 | 28 | 83 | 95.5 | B+ | 85-89 | 3 | 12 | 85.2 | C+ | 70-79 | 2 | 79 | 1 | - | 93.5 | |
| | | | A | 90-94 | 7 | | | B | 80-84 | 2 | | | C | 60-69 | - | | | | | |
| 13. | ՖԴՏ և տեխ. | 14 | A+ | 95-100 | 8 | 93 | 95.5 | B+ | 85-89 | 1 | 7 | 88 | C+ | 70-79 | - | - | - | - | 95 | |
| | | | A | 90-94 | 5 | | | B | 80-84 | | | | C | 60-69 | - | | | | | |
| 14. | Մարզական լրագրություն | 5 | A+ | 95-100 | 3 | 60 | 98.3 | B+ | 85-89 | 2 | 40 | 88 | C+ | 70-79 | - | - | - | - | 94.2 | |
| | | | A | 90-94 | | | | B | 80-84 | | | | C | 60-69 | - | | | | | |
| | Ընդամենը | 94 | A+, A | | 76 | 82 | 96.7 | B+, B | | 14 | 15 | 84.9 | C+, C | | 3 | 3 | 69.5 | 1 | - | 92.7 |

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | Մասնագիտություն | Ուս. քանակ | Ե2. տարով | | | % | ՄԱԳ | Ե2. տարով | | | % | ՄԱԳ | Ե2. տարով | | | % | ՄԱԳ | F x n/% | F n/% | ՄԱԳ (ընդհանուր) |
|----|-------------------|------------|-----------------|--------|----|-----|------|-----------------|-------|-------|----|------|-----------------|-------|-------|---|-----|---------|-------|-----------------|
| | | | Ռեյտինգ. միավոր | n | | | | Ռեյտինգ. միավոր | n | | | | Ռեյտինգ. միավոր | n | | | | | | |
| 1. | ԱՖԿ | 5 | A+ | 95-100 | 3 | 10 | 94 | B+ | 85-89 | - | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | - | 94 |
| | | | A | 90-94 | 2 | 0 | | B | 80-84 | - | - | - | C | 60-69 | - | - | - | - | - | |
| 2. | ԱԴ սպորտ | 2 | A+ | 95-100 | 1 | 10 | 92.5 | B+ | 85-89 | - | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | - | 92.5 |
| | | | A | 90-94 | 1 | 0 | | B | 80-84 | - | - | - | C | 60-69 | - | - | - | - | - | |
| 3. | Կինեզիոլոգիա | 25 | A+ | 95-100 | 19 | 88 | 92.1 | B+ | 85-89 | 1 | 8 | 82.5 | C+ | 70-79 | - | 4 | 60 | - | - | 93.7 |
| | | | A | 90-94 | 3 | | | B | 80-84 | 1 | | | C | 60-69 | 1 | | | - | - | |
| 4. | Սպ. և մարզ | 43 | A+ | 95-100 | 24 | 81 | 96 | B+ | 85-89 | 4 | 14 | 85 | C+ | 70-79 | 2 | 5 | 78 | 1 | - | 93.6 |
| | | | A | 90-94 | 10 | | | B | 80-84 | 2 | | | C | 60-69 | - | | | 23 | - | |
| 5. | Մարզակ. լրագրութ. | 5 | A+ | 95-100 | 2 | 60 | 95.3 | B+ | 85-89 | 2 | 40 | 86.5 | C+ | 70-79 | - | - | - | - | - | 91.8 |
| | | | A | 90-94 | 1 | | | B | 80-84 | - | | | C | 60-69 | - | | - | - | | |
| 6. | ՖՐՏ և տեխ. | 14 | A+ | 95-100 | 8 | 10 | 95.1 | B+ | 85-89 | - | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | - | 95.1 |
| | | | A | 90-94 | 6 | 0 | | B | 80-84 | - | - | - | C | 60-69 | - | - | - | - | - | |
| 7. | ՄՊ հեգարան. | 3 | A+ | 95-100 | 3 | 100 | 96 | B+ | 85-89 | - | - | - | C+ | 70-79 | - | - | - | - | - | 96 |
| | | | A | 90-94 | - | | | 0 | B | 80-84 | - | - | - | C | 60-69 | - | - | - | - | |
| 8. | ՄՊ մենեջմենտ | 14 | A+ | 95-100 | 6 | 93 | 94.5 | B+ | 85-89 | - | 7 | 80 | C+ | 70-79 | - | - | - | - | - | 93.4 |
| | | | A | 90-94 | 7 | | | B | 80-84 | 1 | | | C | 60-69 | - | | - | - | | |
| 9. | Մարկետինգ | 4 | A+ | 95-100 | 1 | 75 | 93.3 | B+ | 85-89 | 1 | 25 | 88 | C+ | 70-79 | - | - | - | - | - | 92 |
| | | | A | 90-94 | 2 | | | B | 80-84 | - | | | C | 60-69 | - | | - | - | | |
| | Ընդամենը | 115 | A+, A | | 99 | 87 | 94.3 | B+, B | | 12 | 10 | 84.4 | C+, C | | 3 | 3 | 69 | 1 | - | 93.5 |

4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ղեկավարվելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հիմնադրամի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգով՝ որպես գիտական խորհրդին առընթեր մշտապես գործող մարմին, կոչված է իր երեք հանձնաժողովների միջոցով իրականացնել՝ ուսումնամեթոդական, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի գրախոսման և հրատարակման երաշխավորման, ուսումնական պլանների և ծրագրերի կորրեկցիաների հանձնաժողովների միջոցով անձնակազմի գիտամանկավարժական գործունեության վերլուծության և զարգացման հեռանկարների համակարգման ապահովում:

Խորհուրդը համակարգել է ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցեր, իրականացվող և նոր բացվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր, պետական կրթական չափորոշիչներ, դասավանդման նոր եղանակներ, ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի և ուսանողների գիտելիքների գնահատման ռեյտինգային համակարգի ներդրում, ուսումնամեթոդական և գիտամեթոդական այլ հարցեր:

1. Ուսումնամեթոդական հանձնաժողով

Նշված ժամանակահատվածում ուսումնամեթոդական հանձնաժողովը ենթակառուցվածքում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Ընտրվել և հստակեցվել է հանձնաժողովի կազմը:
2. Համակարգվել է ֆակուլտետների մեթոդական հանձնաժողովների փաստաթղթերը՝ ըստ տարեկան պլանների:
3. Ուսումնասիրվել է բակալավրիատի և մագիստրատուրայի նոր բացվող մասնագիտությունների /սպորտի հոգեբանություն, մենեջմենտ, մարկետինգ/, պահանջվող փաստաթղթերի ու մասնագիտական գրականության վիճակը:
4. Ուսումնասիրվել է ամբիոնների ու բաժինների կողմից ուսումնամեթոդական աշխատանքների և հրահանգների հրատարակման տարեկան պլանները:
5. Կատարվել է ամբիոններում գնահատման չափորոշիչների, դասավանդման ինովացիոն տեխնոլոգիաների ներդրումների յուրահատկությունների ուսումնասիրություն:

6. Ուսումնասիրվել է ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի ամբիոններում ուսումնամեթոդական աշխատանքների ու փաստաթղթերի վիճակը, արդյունքները զեկուցվել է ինստիտուտի գիտական խորհրդի մարտ ամսվա նիստին:
7. Բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների թեմաների ընտրություն, կատարման որակի և արդյունքների համապատասխանության ուսումնասիրություն:

II. Ուսումնական ձեռնարկների և դասագրքերի գրախոսման և հրատարակման երաշխավորման հանձնաժողով

Հաշվետու ուսումնական տարում ինստիտուտի աշխատակիցների կողմից պատրաստվել և հրատարակվել են՝

1. Մենագրություն – 1
2. Սուերամարտի տեղեկատու – 1
3. Հանրագիտարան – 1
4. Ուսումնական ձեռնարկ - 13
5. Ուսումնամեթոդական ձեռնարկ – 9
6. Մեթոդական ձեռնարկ – 9
7. Մեթոդական ուղեցույց – 1

III. Ուսումնական պլանների և ծրագրերի կորրեկցիաների հանձնաժողով

2016-2017 տարում ինստիտուտի ուսումնական մասը իր աշխատանքները իրականացրել է ղեկավարվելով կառավարության, կրթության և գիտության նախարարության, գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով և հրահանգներով:

Ուսումնական տարվա ընթացքում ուսումնական մասը իրականացրել է ուսումնական պլանների վերանայում և կատարելագործում ըստ դեկանատների և ամբիոնների հայտերի:

Ավելացվել են բակալավրիատի համար կազմված ծրագրերի քանակը մայրենի լեզվով /թվով 17 ծրագիր/, ինչպես նաև մագիստրատուրայի համար/ թվով 28/, կախված նոր ուղղություններ բացվելու հետ: Հսկայական աշխատանք է կատարվել բակալավրի առարկայական ծրագրերը ռուսերեն թարգմանելու ուղղությամբ, այդ թվում նաև մագիստրատուրայի և հեռակա ուսուցման համար /թվով 110/ ծրագիր: Ներկայումս

ռուսերեն ծրագրերի ամբողջական ցանկը ավարտելուց հետո անցնելու ենք անգլերեն լեզվով թարգմանության:

Պատրաստվել են նաև ռուսումնական ծրագրեր հայցորդների համար ռուսումնական պլանով նախատեսված առարկաներից:

Աշխատանքային փորձի փոխանակման համար բաժինը համագործակցել է Երևանի պետական, Խ. Աբովյանի մանկավարժական համալսարանի և այլ բուհերի համապատասխան բաժինների հետ, կապված ռուսումնական պլանների, ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շուրջ:

Ռուսումնական բաժնի աշխատանքների արդյունավետության մասին բազմիցս զեկուցվել է ինստիտուտի գիտական խորհրդի, ռեկտորատի նիստերում, քննարկելով ռուսումնական պլանների և առարկայական ծրագրերի հետ կապված հիմնահարցերը

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1. Ինստիտուտի ամբիոնների գիտական գործունեությունը

2016-2017 ուսումնական տարում ինստիտուտի բոլոր ֆակուլտետները շարունակել են իրենց գիտահետազոտական աշխատանքները:

2016 թվականի նոյեմբերի 14-17-ը կայացավ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 43-րդ միջազգային գիտամեթոդական գիտաժողովը՝ «Սպորտային մանկավարժական գիտություն» խորագրով: Համաժողովում լսվել է 20 զեկուցում: Դրանց քննարկումներին մասնակցել են ինչպես ինստիտուտի, այնպես էլ հանրապետության այլ բուհերի դասախոսներ, մագիստրանտներ, հայցորդներ:

Գիտաժողովին նախորդել է 43-րդ միջազգային գիտաժողովի ժողովածուի լույսընծայումը՝ բաղկացած 492 էջից, որում տեղ են գտել 84 հայերեն և 23 ռուսերեն գիտական աշխատանքներ:

Ինստիտուտի ամբիոններում և այլ բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմից Միջազգային 43-րդ գիտամեթոդական համաժողովին ներկայացված զեկուցումների վերաբերյալ տվյալները ներկայացված են 1-ին աղյուսակում:

| № | Ֆակուլտետ, ամբիոն | Թիվը | | Քանակը | |
|---|--|------------|---------------------------|--------------------------|-------------------|
| | | Դասախոսներ | ՔՀԱ-ով զբաղվող դասախոսներ | Ներկայացված գիտ. նյութեր | Զեկուցված նյութեր |
| Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետ | | | | | |
| 1. | Ադապտիվ ՖԿ և անատոմիայի | 10 | 9 | 8 | - |
| 2. | Աթլետիկայի | 11 | 11 | 3 | 1 |
| 3. | Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության | 18 | 14 | 7 | 2 |
| 4. | Կինեզիոլոգիայի | 15 | 6 | 3 | - |
| 5. | Լեզուներ | 7 | 5 | 6 | 1 |
| 6. | Մարզախաղերի | 16 | 16 | 4 | 1 |
| 7. | ՖԴՏ և մեթոդիկայի | 13 | 9 | 5 | 1 |
| Ընդամենը ֆակուլտետում | | 90 | 70 | 36 | 6 |
| Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետ | | | | | |
| 1. | Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների | 18 | 17 | 10 | 2 |
| 2. | Ըմբշամարտի | 19 | 9 | 2 | - |
| 4. | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | 9 | 9 | 5 | 2 |
| 5. | Կիրառական մարզաձևերի | 10 | 6 | 5 | 1 |
| 6. | Ծանրամարտի, բռնցքամարտի, սուսերամարտի | 11 | 11 | 7 | 2 |
| 7. | Մարզական լրագրության և շախմատի | 7 | 7 | 2 | 1 |
| 8. | Մագիստրատուրայի բաժին | | | 2 | 2 |
| Ընդամենը ֆակուլտետում | | 74 | 59 | 33 | 10 |
| Այլ կազմակերպություններից | | | | | |
| 13. | Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան | | | 2 | |
| 14. | Արցախի պետական համալսարան | | | 3 | |
| 15. | Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ | | | 3 | |
| 16. | Հայաստանի պետ. տնտ. համալսարան | | | 4 | |

| | | | | | |
|-----|--|--|--|-----------|--|
| 17. | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | | | 1 | |
| 18. | ՀՊՃՀ /Պոլիտեխնիկ/ | | | 5 | |
| 19. | Երևանի պետական համալսարան | | | 3 | |
| 20. | Հայաստանի ազգային ագրարային համալսարան | | | 1 | |
| 21. | Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ | | | 1 | |
| 22. | Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | | | 2 | |
| 23. | Վոլգոգրադի ֆիզիկական կուլտուրայի պետական ակադեմիա | | | 1 | |
| 24. | Վնասվածքաբանության և օրթոպեդիայի կենտրոն | | | 1 | |
| 13. | Սիբիրի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական համալսարան | | | 1 | |
| 14. | Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական մանկավարժական համալսարան | | | 1 | |
| 15. | Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական համալսարան | | | 1 | |
| 16. | Հայաստանում ֆրանսիական համալսարան | | | 1 | |
| 17. | Երևանի 189 դպրոց | | | 1 | |
| | Ընդամենը | | | 37 | |

Հաշվետու ուստարում առաջադիմել է ինստիտուտի գիտական ներուժը. ինստիտուտում աշխատում են գիտությունների 8 դոկտոր-պրոֆեսորներ (Վ.Առաքելյան, Ֆ.Ղազարյան, Մ.Իսախիրյան, Բ.Սաղյան, Մ.Աղաջանյան, Ս.Գրիգորյան, Ա.Չատինյան, Ե. Հակոբյան), 52 գիտության թեկնածուներ, 30 պրոֆեսորներ, 37 դոցենտներ:

2016-2017 ուսումնական տարում ինստիտուտի Միջազգային գիտատեղեկատվական բաժնի կողմից ամբիոնների հետ համատեղ քննարկվել և ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացվել հայցորդների ատենախոսական աշխատանքների գիտական թեմաները:

Ինստիտուտի ամբիոններում շարունակվում են աշխատանքները նաև համաամբիոնային և անհատական գիտական թեմաների իրականացման ուղղությամբ:

2016-2017 ուստարում ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակվել են բազմաթիվ ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, մենագրություններ, այդ թվում՝ Մ. Աղաջանյանի «Սպորտային բժշկություն և ռեաբիլիտացիա», Հ. Աղաբաբյանի, Ն. Առաքելյանի «Հոգեֆիզիոլոգիայի հիմունքները», Կ. Ղազարյանի, Կ. Գրիգորյանի, Հ. Խաչատրյանի «Հողի էկոլոգիա», Կ. Ղազարյանի, Վ. Շալունցի «էկոլոգիայի բնապահպանության հիմունքներ», Գ. Հակոբյանի «Անձնագոծ թագուհին», Ա. Մարտիրոսյանի «Մերսումը և բուժական մարմնամարզությունը վաղ մանկական հասակի երեխաների մոտ», Ա. Մուրադյանի «Կլինիկական պրակտիկայի գործնական պարապմունքներ», Ֆ. Ղազարյանի «Ակնարկներ ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության մասին», Հ. Մելքոնյանի «Դարպասապահի խաղը հանդբոլում», Կ. Ասմարյանի «Վոլեյբոլ», Լ. Մանուկյանի, Կ. Գրիգորյանի, Ն. Մկրտչյանի, Ա. Սարգսյանի «Մեկնաբանություն», Ս. Հովեյանի, Լ. Մանուկյանի, Լ. Խաչատրյանի «Տարիքային անատոմիա», Տ. Բեգիդովայի, Գ. Պապանյանի «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի հիմունքներ», Ա. Հակոբյանի «Բուժական ֆիզկուլտուրայի և բուժական լողի կիրառումը կրթական համակարգում», Կ. Գասպարյանի «Հրաձիգի ֆիզիկական պատրաստությունը», Ն. Սելումյանի, Ռ. Խիզանցյանի «Սպորտային մարմնամարզություն 2», Ն. Սելումյանի, Ռ. Խիզանցյանի, Ս. Գալստյանի «Հայկական մարմնամարզության հանրագիտարան», Հ. Գասպարյանի, Մ. Մարգարյանի «Ճկունության մշակումը սպորտային մարմնամարզությունում», Ա. Գյոզալյանի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մենեջմենտ», «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի կառավարում», Գ. Սարգսյանի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիոլոգիա», Վ. Գևորգյանի «Կարատեդոյի տեսություն և մեթոդիկա, 1-ին մաս», «Կարատեդոյի տեսություն և մեթոդիկա, 2-րդ մաս», Հ. Նավասարդյանի, Ա. Նավասարդյանի «Հայ սուսերամարտիկներ» տեղեկատու, Գ. Ազիզյանի, Ա. Դանիելյանի, Զ. Հակոբյանի «Ծանրամարտի տեսություն և մեթոդիկա», Հ. Բաբայանի, Ա. Ստեփանյանի, Թ. Սոֆյանի «Հոգեբանության գիտահետազոտական մեթոդները սպորտում»:

Այսպիսով՝ հաշվետու ուսումնական տարում ինստիտուտի 40 դասախոսների կողմից հրատարակվել է 26 ուսումնագիտական գրականություն:

2016-2017 ուսումնական տարում ինստիտուտի ամբիոնների դասախոսների մեծ մասը տարաբնույթ հոդվածներ են տպագրել ինչպես հանրապետության, այնպես էլ արտերկրյա գիտական ամսագրերում և ժողովածուներում: Գիտական ակտիվ գործունեություն են ծավալել հատկապես Մանկավարժություն և հոգեբանության, ՖԴՏ և մեթոդիկայի, Կինեզիոլոգիայի, Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնները:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսներ Հ. Բաբայանի, Ա. Չատինյանի, Ա. Ստեփանյանի, Ս. Արզաքանյանի, Վ. Գեղամյանի, Թ. Սոֆյանի, Ա. Դավթյանի, Ն. Գևորգյանի կողմից հաշվետու տարում հանրապետական և միջազգային գիտաժողովներում ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներով տպագրվել է 18 գիտական հոդված՝ Հայաստանում, Ղազախստանում, Մոլդովայում, Դաղստանում, Թաթարստանում (Ռուսաստանի Դաշնություն):

ՖԴՏ և մեթոդիկայի ամբիոնի դասախոսներ Ֆ. Ղազարյանը, Ե. Հակոբյանը, Ա. Ստեփանյանը, Մ. Բարբարյանը (6 հոդված), Ե. Նահապետյանը, Ռ. Դավթյանը, Ս. Խաչատրյանը հոդվածներ են տպագրել Հայաստանում (Երևան), Մոլդովայում (Քիշնև), Ռուսաստանի Դաշնության Կազան, Մախաչկալա, Ուֆա, Կրասնոյարսկ քաղաքներում:

Կինեզիոլոգիայի ամբիոնի դասախոսներ Ս. Գրիգորյանը, Զ. Միրիջանյանը, Լ. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը, Ա. Օհանջանյանը Երևան, Կրամոտորսկ (Ուկրաինա), Նովոսիբիրսկ (Ռուսաստանի Դաշնություն), Զագրեբ (Խորվաթիա) քաղաքների միջազգային ամսագրերում տարբեր գիտական և մեթոդական հոդվածներ են հրատարակել:

2016 թ. նույն ամբիոնի դասախոս Ա. Մուրադյանը Գերմանիայի բնական գիտությունների Եվրոպական ակադեմիայի կողմից արժանացավ պատվավոր դոկտորի կոչման, իսկ դասախոս Լ. Խաչատրյանը «World Science» միջազգային հասարակական կազմակերպության կողմից ստացել է դիպլոմ՝ «Հետազոտական աշխատանքների և ժամանակակից գիտության զարգացմանը կարևոր ներդրում կատարելու համար», վերջինս նաև 2017 թվականին դարձել է «Մանկավարժների, հոգեբանների և բժիշկների Եվրոպական ասոցիացիայի» անդամ:

Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի դասախոսներ Ն. Քսաջիկյանը (4 հոդված), Լ. Ստեփանյանը (6 հոդված), Կ. Ղազարյանը (5 հոդված), Ն. Աղաբաբյանը, Մ. Աղաջանյանը, Մ. Ճճմարիտյանը հոդվածներ են տպագրել ինչպես հանրապետական, այնպես էլ արտերկրյա ամսագրերում և ժողովածուներում, այդ թվում՝ Երևանում, Մոսկվայում, Տամբովում, Դելիում և այլն:

Տարբեր երկրների՝ **Ռուսաստանի Դաշնության** (Մոսկվա, Վորոնեժ, Ուֆա, Կրասնոդար, Չելյաբինսկ, Մախաչկալա, Վոլգոգրադ), **Անգլիայի** (Լոնդոն), **Իսրայելի** (Երուսաղեմ), **Թուրքմենստանի** (Աշխաբադ), **Չինաստանի**, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքների (**Երևան, Աղվերան, Գյումրի**) միջազգային ամսագրերում և ժողովածուներում սպորտային գիտության կարևորագույն ոլորտներին վերաբերող հոդվածներ են տպագրել, նաև զեկուցումներով հանդես եկել ինստիտուտի պրոֆեսոր, ռեկտոր Վ. Առաքելյանը, դասախոսներ Ա. Գյոզալյանը, Մ. Նիկոյանը (4 հոդված), Ա. Պատվականյանը, Գ. Պապանյանը, Վ. Աբելյանը (4 հոդված), Գ. Հակոբյանը, Ս. Դանիելյանը, Հ. Ավագյանը, Վ. Եսայանը, Ս. Հարությունյանը, Ս. Ղարաբաղյանը:

ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր Վահրամ Առաքելյանի աջակցությամբ սույն թվականի մայիսին Աղվերանում անցկացվեց եռօրյա միջազգային խորհրդաժողով՝ նվիրված մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության, դասավանդման որակի բարձրացման, դասախոսական կազմի շարունակական գնահատման ընթացակարգերի արդի մոտեցումներին ու պահանջներին:

Աշխատաժողովի գլխավոր հյուրն էր միջազգային փորձագետ Հիլդա Շիլսը, ով ղեկավարում է Բելգիայի Թոմաս Մուր համալսարանական քոլեջի Որակի կառավարման բաժինը: Խորհրդաժողովին մասնակցում էր բուհի պրոֆեսորադասախոսական կազմից ձևավորված աշխատանքային թիմը (Ա. Նուշիկյան, Ա. Գյոզալյան, Գ. Նալբանդյան, Ա. Ստեփանյան, Գ. Մուրադյան, Ս. Դանիելյան, Գ. Սարգսյան, Ռ. Բեգոյան, Մ. Հովսեփյան), որը ներգրավված է նաև բուհի ներքին որակի ապահովման մշտադիտարկման գործընթացներում:

2. Կադրերի պատրաստում

2016-2017 ուսումնական տարում ընդունվել է 1 դոկտորանտ, հեռակա ուսուցմամբ 1 ասպիրանտ և 5 հայցորդ: Այժմ ինստիտուտում ուսանում են 1 ասպիրանտ և 17 հայցորդ, որոնցից 11-ն ինստիտուտի աշխատակիցներ են, իսկ 6-ը՝ այլ կազմակերպությունների գիտաշխատողներ:

2016 թվականին թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանել է Ծանրամարտի, բոնցքամարտի, սուսերամարտի ամբիոնի հայցորդ Վարդգես Մյասնիկի Աբեյյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Մ.Ս.Աբրահամյան), իսկ Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի հայցորդներ Ռիտա Բորիկի Դավթյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ս.Հակոբյան) անցել է նախնական պաշտպանություն:

2017թ. թեկնածուական ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանել են Կինեզիոլոգիայի ամբիոնի հայցորդ Զարուհի Միհրանի Միրիջանյանը (գիտական ղեկավար՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Վ.Գրիգորյան), Մարզախաղերի ամբիոնի հայցորդ Մուշեղ Էդուարդի Նիկոյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյան), Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի հայցորդ Անահիտ Գևորգի Եսայանը (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Ս.Իսպիրյան), Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի հայցորդներ Արսեն Ռաֆիկի Պապիկյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ս.Հակոբյան) և Գրիգորի Գագիկի Գրիգորյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Ղազարյան):

Որակավորման քննություններն ավարտել է Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ Արտյոմ Սեյրանի Դավթյանը (գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Չատինյան) և պատրաստվում է անցնել նախնական փորձաքննություն:

Որակավորման քննություններ են հանձնել նաև հայցորդներ Ռոբերտ Արտաշեսի Միկոյանը (Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն) և Ալեն Ռուդոլֆի Ասատրյանը (Ադապտիվ ՖԿ և անատոմիայի ամբիոն):

Ինստիտուտում հայցորդների թիվն ըստ ամբիոնների ունի հետևյալ պատկերը.

1. Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն - 2
2. Մանկավարժության և հոգեբանության ամբիոն - 7
3. Կինեզիոլոգիայի ամբիոն - 3
4. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և անատոմիայի ամբիոն - 2
5. Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոն - 2
6. Աթլետիկայի ամբիոն - 1

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 17

2016-2017 ուսարվա ինստիտուտի հայցորդների ցուցակ

| Ամբիոնը | N | Ազգանուն, անուն, հայրանուն | Թեմայի հաստատման ժամկետը | Ավարտման ժամկետը |
|---|---|--|--------------------------------|---------------------|
| ՖԴՏ և մեթոդիկա | | Ղանթարչյան Էվելինա Էդուարդի (Ֆիզ. արձ. /հր115, 24.02.2015/) | 28.06.2013 | |
| | | Միկոյան Ռոբերտ Արտաշեսի | 09.12.2013 | 09.12.2018 |
| Սպորտային մանկավարժություն և հոգեբանություն | | Արզաքանյան Սոնա Սամվելի (ժամկետը երկարացվել է հր. 89, 04.11.2015թ) | 18.10.2010 | 18.10.2017 |
| | | Դավթյան Արտյոմ Սեյրանի | 28.06.2013 | 28.06.2018 |
| | | Բարխուդարյան Անժելա Արամայիսի | 28.06.2013 | 28.06.2018 |
| | | Կայֆաջյան Տիգրան Մովսեսի | 10.10.2013 | 10.10.2018 |
| | | Տիրացույան Տաթևիկ Աշոտի | 07.11.2016 | 07.11.2021 |
| | | Ալեքսանյան Հայկուհի Մանվելի | 07.11.2016 | 07.11.2021 |
| | | Բաղդասարյան Արևհատ Ռաֆիկի | 07.11.2016 | 07.11.2021 |
| Կինեզիոլոգիա | | Խաչատրյան Նունե Համբարձումի (Ֆիզ. արձ. /հր81, 12.10.2015/) | 28.06.2013 | 28.06.2018 |
| | | Օհանջանյան Աշխեն Սամվելի | 28.06.2013 | 28.06.2018 |
| | | Դունոյան Արայիկ Միշայի | 28.06.2013 | 28.06.2018 |
| Ադապտիվ ՖԿ և անատոմիա | | Գաբրիելյան Անժելա Միքայելի | 28.06.2013 | 28.06.2018 |
| | | Ասատրյան Ալեն Ռուդոլֆի | 07.11.2016 | 07.11.2021 |
| Ֆիզ. և սպորտ. բժշկ. | | Աբրահամյան Տատյանա Վաչագանի (Ֆիզ. արձ. /հր92, 25.12.2014/) | 22.05.2011 | |
| | | Հարությունյան Նվեր Սլավիկի | 28.06.2013 | 28.06.2018 |
| Աթլետիկա | | Մարտիրոսյան Էրիկ Զավենի | 07.11.2016 | 07.11.2021 |

3. Ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության աշխատանքների արդյունքները

2017թ. ուսանողական գիտաժողովն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում գիտաժողովն անցկացվել է ինստիտուտի բոլոր ամբիոններում: Ամբիոնների ուսանողական գիտական խմբակներում ընդգրկված 239 ուսանողներից 125-ը գիտական զեկուցումներով հանդես են եկել ամբիոնների գիտաժողովներին: Լավագույն աշխատանքները երաշխավորվել են՝ ներկայացնելու ինստիտուտի ֆակուլտետների գիտաժողովներին:

Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետի գիտաժողովին զեկուցել են 26 ուսանող, որոնցից 24-ի գիտական աշխատանքները գնահատող հանձնախումբն առաջարկել է ներկայացնել գիտաժողովի երրորդ փուլում՝ ինստիտուտի ուսանողական գիտաժողովին:

Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի գնահատող հանձնախումբը, գնահատելով տվյալ ֆակուլտետի գիտաժողովի 17 մասնակիցների աշխատանքները, երաշխավորել է ինստիտուտի գիտաժողովին ներկայացնել 8-ը:

Ինստիտուտի ուսանողական գիտական աշխատանքներն ամփոփվել են ապրիլի 28-ին կայացած գիտաժողովում: Գիտաժողովն անցկացվել է 3 ուղղությամբ՝ ֆիզիկական դաստիարակություն և սպորտային պատրաստություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի պատմության և սոցիոլոգիայի, բժշկական սաբանական և հոգեբանական:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստություն հարցերի բաժնում լավեցին 11 զեկուցում: Զեկուցումներից 4-ը ներկայացրել էին բակալավրիատի ուսանողները, 5-ը՝ մագիստրանտները և 2-ը՝ հեռակա բաժնի ուսանողները:

Բոլոր զեկուցումները փորձարարական էին: Զեկուցումների ընթացքում ուսանողները կիրառեցին ցուցադրման տեխնիկական միջոցներ:

Գիտական աշխատանքներից դրվատանքի են արժանի Եղիա Յայլյանի, Հայկ Առաքելյանի, Խանում Խաչատրյանի և Նելլի Մարգարյանի ելույթները:

Երկրորդ բաժնի աշխատանքներում ընդգրկված էին ֆիզիկական կուլտուրայի, սպորտի պատմության և սոցիոլոգիայի հարցերը: Զեկուցումներով հանդես եկան 9-ը ուսանողներ, որոնցից 2 մագիստրանտ էր: Գիտական աշխատանքներից 7 տեսական

բնույթի էին, 2-ը՝ փորձարարական: Ելույթների գերակշիռ մասը ներկայացվեց ցուցադրական նյութով՝ կիրառելով տեխնիկական միջոցներ:

Հաջող ելույթներով առանձնացան՝ Անի Մանուկյանը, Էդգար Աթյանը, Անահիտ Ղևոնդյանը, Անահիտ Գասպարյանը:

Բժշկականսաբանական և հոգեբանական հարցերի բաժնում զեկուցեցին 10-ը ուսանող, որոնցից 4-ը բակալավրիատի ներկայացուցիչներ էին, 6-ը՝ մագիստրատուրայի:

Զեկուցված աշխատանքներից 3 փորձարարական էին: Բոլոր աշխատանքները ներկայացված էին տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Արժանի ելույթներով աչքի ընկան Արմինե Դեմիրխանյանը, Արման Հովհաննիսյանը, Լիանա Փիլոսյանը, Նաիրա Մարտիրոսյանը: Ուսանողական գիտական աշխատանքների ղեկավարներ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մ. Աղաջանյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյանը, մ.գ.թ., պրոֆեսոր Մ. Աբրահամյանը, պրոֆեսորներ՝ Հ. Մելքոնյանը, Յու Կուպայանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Խաչատրյանը, կ.գ.թ. Ն. Քսաջիկյանը, ասիստենտներ Ա. Բարսեղյանը, Ն. Հովհաննիսյանը, դասախոսներ՝ Հ. Քալանթարյանը, Ա. Բաղդասարյանը, Մ. Հովհաննիսյանն արժանի են գնահատանքի:

Դրական աշխատանքների կողքին նկատվեցին նաև թերություններ. որոշ հոդվածների ներկայացման ձևը բարձր մակարդակի վրա չէր, զեկուցող ուսանողներից ոմանք լիովին չէին տիրապետում ներկայացված աշխատանքի նյութին, գիտաժողովին ներկա ուսանողների քանակը սակավ էր, ակտիվությունը՝ բավականին ցածր:

Կից ներկայացվում է գիտաժողովի մասնակիցների վերաբերյալ ամփոփ տեղեկագիր.

| ՖԱԿՈՒԼՏԵՏ, ԱՄԲԻՈՆ | | Քանակը | | | | | | |
|--|--|------------|---|--|--|---|--|--------------------------|
| | | ՈՒԳԸ | Ամբիոնում գեկուցվող աշխա- տանքներ | Ֆակուլտետում գեկուցվող աշխա- տանքներ | Գիտաժողովում գեկուցվող աշխա-տանքներ | Միջազգային գիտա- ժողովին մաս- նակցություն | Գիտ. հոդվ. տպագրութ. ժողովածու ներում | Հոդվեր միջ. գիտաժողովներ |
| Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների | | | | | | | | |
| 1 | Ադապտիվ ՖԿ և անատոմիայի | 21 | 19 | 3 | 1 | | | |
| 2 | Աթլետիկայի | 12 | 9 | 2 | 2 | | | |
| 3 | Լեզուների | 11 | 8 | 3 | 2 | | | |
| 4 | Կինեզիոլոգիայի | 18 | 11 | 1 | 4 | 1 | | |
| 5 | Մարզախաղերի | 15 | 11 | 3 | 2 | | | |
| 6 | Ֆիզիոլոգիայի և սպ. բժշկության | 12 | 10 | 3 | 4 | | | |
| 7 | ՖԴՏ և մեթոդիկայի | 14 | 14 | 9 | 6 | | | |
| Ընդամենը ֆակ.-ում | | 103 | 82 | 24 | 21 | 1 | | |
| Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետ | | | | | | | | |
| 1 | Ըմբշամարտի | 19 | 4 | 4 | 1 | | | |
| 2 | Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների | 25 | 14 | 5 | 2 | 6 | | |
| 3 | Մանկավարժության և հոգեբանության | 15 | 3 | 3 | 2 | 1 | 1 | |
| 4 | Կիրառական մարզաձևերի | 28 | 6 | 2 | 1 | 1 | | |
| 5 | Մարմնամարզ. և սպ. պարերի | 22 | 6 | 2 | 1 | | | |
| 6 | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուերամարտի | 12 | 8 | 1 | 1 | 1 | | |
| 7 | Մարզական լրագրության և շախմատի | 15 | 2 | 2 | 1 | | | |
| Ընդամենը ֆակուլտետում | | 136 | 43 | 19 | 9 | 9 | 1 | |
| Ընդամենը ինստիտուտում | | 239 | 125 | 43 | 30 | 10 | 1 | |

4. Միջազգային գիտատեղեկատվական բաժնի գործունեությունը

Միջազգային գիտատեղեկատվական կենտրոնն ունի երեք ենթաբաժին՝ միջազգային համագործակցության, գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների:

2016-2017 ուսումնական տարում Միջազգային գիտատեղեկատվական բաժինը կատարել է իր առջև դրված խնդիրները. հաշվետու տարում բաժինն ինստիտուտի բոլոր ամբիոններին, տարբեր ստորաբաժանումներին մատուցել է մասնագիտական և տպագրական աշխատանքներ, ինչպես նաև նպաստել գիտական հարցերի կառավարման գործին:

2016-2017 ուստարում ընդունվել են սիյուռքի 9-ը քաղաքացիներ՝ 6 առկա, 3 հեռակա ուսուցման բաժիններում:

Ինստիտուտում բակալավրի աստիճանով սովորում են արտերկրի և սիյուռքի 45 քաղաքացիներ, այդ թվում՝

ա) Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետ՝ 11 ուսանող (ՌԴ՝ 1, Վրաստան՝ 9, Սիրիա՝ 2)

բ) Ֆիզիկական դաստիարակության և առողջարարական տեխնոլոգիաների ֆակուլտետ՝ 13 ուսանող (Իրան՝ 1, Լիբանան՝ 2, Վրաստան՝ 7, Սիրիա՝ 2, ՌԴ՝ 1),

գ) Հեռակա ուսուցման բաժին՝ 21 ուսանող (Վրաստան՝ 15, ՌԴ՝ 4, Սիրիա՝ 1, Հունաստան՝ 1):

Ընդհանուր թվով արտերկրի 45 քաղաքացիներ:

2016-2017 ուսումնական տարում բաժինն իրականացրել է նաև հետևյալ աշխատանքները.

- 1) ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցելով՝ արտասահմանյան ուսանողների ամենամյա ընտրության և ընդունելության կազմակերպում,
- 2) հայրենիք-սիյուռք գիտամշակութային կապերի զարգացման գործընթացի կատարելագործում և ընդլայնում,
- 3) գիտական միջոցառումների, այդ թվում՝ միջազգային սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների, կլոր սեղանների, կոնֆերանսների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպում:

- 4) «Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հիմնախնդիրները» խորագրով միջազգային 44-րդ գիտաժողովի նյութերի և ծրագրի նախապատրաստում,
- 5) ինստիտուտի ամենամյա ուսանողական գիտաժողովի նյութերի և ծրագրի նախապատրաստում,
- 6) ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին տարբեր գիտական ծրագրերում ներգրավելու աշխատանքների, այդ թվում՝ փոխանակման ծրագրերի կազմակերպում,
- 7) կազմակերպել է ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ըստ բնագավառների) առարկայի որակավորման երկու քննություն,
- 8) անցկացրել է 2016-2017 ուսումնական տարվա երիտասարդ դասախոսների դասընթացներ՝ ըստ ժամանակացույցի,
- 9) կազմել է 206-2017 ուսումնական տարվա պրոֆեսորադասախոսական կազմի ատեստավորման թերթիկ (հաստատված՝ 2017 թ. մայիսի 19-ի ռեկտորատի նիստում),
- 10) յուրաքանչյուր ուսումնական տարվա համար պատրաստել է երիտասարդ դասախոսների գիտամանկավարժական գործունեության գնահատման հարցաթերթիկ (հաստատված՝ 2017 թ. մայիսի 30-ի ռեկտորատի նիստում):
- 11) ներդրել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն,
- 12) պարբերաբար թարմացրել և համակարգային փոփոխության է ենթարկել ինստիտուտի Վեբ կայքը:

6. ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. սեպտեմբերին հաստատվել է ինստիտուտի վարչատնտեսական մասի գործունեության տարեկան պլանը, որը ներառում էր 2016-2017 ուստարվա համար նախատեսված գործողությունների ժամանակացույցը: Համաձայն հաստատված ժամանակացույցի՝ տնտեսական մասի աշխատակիցների հետ քննարկվել են աշխատանքային գործունեության հիմնական ուղղությունները, խնդիրները և դրանց լուծման եղանակները: Ներբուհական տնտեսությունը կազմակերպելիս օգտագործվել է ինչպես ինստիտուտի տնտեսական աշխատակիցների, այնպես էլ այլ կազմակերպությունների մասնագիտացված աշխատակիցների ներուժը:

Հստակեցվել է ինստիտուտի տնտեսական աշխատակազմի հաստիքները, կրճատվել է 9 բանվորական և 5 հավաքարարի հաստիքներ, կարևորվել է ինստիտուտի տնտեսական մասի աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կատարման որակը, դրանց նկատմամբ իրականացվել են պարբերական ստուգումներ, գնահատումներ, բացահայտվել են թերությունները և միջոցներ ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

Գնումների մասին օրենքի համաձայն կատարվել է համակարգիչների, համակարգչային կահույքի, գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների գնումներ:

Ընդլայնվել է ներինստիտուտային համակարգչային ներքին ցանցը և միացվել ինտերնետային ցանցին:

Արխիվային փաստաթղթերի հիման վրա պատրաստվել է «Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտի պատմությունը » արխիվային նյութերի ժողովածուն՝ ապագայում հրատարակելու նպատակով:

Բոլոր վերանորոգված կաբինետները, լսարանները կահավորվել են նոր կահույքով,

Թվարկված աշխատանքներից բացի, համաձայն գնումների մասին օրենքի, ձեռք է բերվել ներքոհիշյալ ապրանքները, սարքավորումները, կահույք և սպորտային գույք՝

- բազմաֆունկցիոնալ սարք՝ 4,
- համակարգիչ՝ 6,
- ուսանողական նստարան՝ 178,

- աշխատանքային սեղան՝ 16,
- պահարան՝ 16,
- ուսանողական սեղան՝ 85,
- աթոռ՝ 20,
- հայտարարությունների տախտակ՝ 4,
- երեսպատում՝ 1,
- դասախոսի ամբիոն՝ 1:

ՆՄՀ դրամաշնորհի ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել ներքոհիշյալ գույքը՝

- հանդիպումների սեղան՝ 1,
- ուսանողական սեղան՝ 12,
- ուսանողական աթոռ՝ 24,
- դասախոսական աթոռ՝ 35:

Սպորտային գույք և գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված սարքավորումներ՝

- վազքուղի-1
- հեծանվասարք-1
- բժշկական թաղտ-1
- մարդու մարմնի բաղադրության վերլուծման սարք-1
- ֆուտբոլի ամբիոնի համար, 70 գնդակ, 40 համազգեստ, 20 հատ կոշիկ:

Հաշվետու 2016-17 ուստարում բուհի ուսումնամարզչական բազան ունեցել է հետևյալ պատկերը. ընդհանուր մակերեսը կազմել է 23016.75 քառ. մ, ուսումնական նպատակների համար՝ 17066.45 քառ. մ:

Ինստիտուտն ունի 78 լսարան, որից 12-ը՝ դասախոսական, 26 լաբորատորիա, 1 համակարգչային կաբինետ, 1 պրոբլեմային լաբորատորիա, 8 սպորտային դահլիճ, 1 մարզադաշտ, բռնցքամարտի դահլիճ՝ 929.0ք.մ:

Պատճենահանողի կողմից պատճենահանվել է.

- հատուկ բաժնի համար բլանկներ 3000 հատ, հաշվապահական բլանկներ 4000 հատ, ընդհանուր բաժնի համար ինստիտուտի բլանկներ և ծրարներ 800 հատ, ընդունելության քննությունների համար բլանկներ 5500 հատ,

2016-17 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների ուսանողների ուսվարձի գեղչված գումարների ամփոփ հաշվարկ.

| Ֆակուլտետ | 1-ին Կիսամյակ Ձեռչված Ուս.թիվը | 1-ին Կիսամյակ Ձեռչի գումարը | 2-րդ Կիսամյակ Ձեռչված Ուս. թիվը | 2-րդ Կիսամյակ Ձեռչի Գումարը | Ընդամենը Ձեռչված Ուս-ների Թիվը | ընդամենը |
|----------------------------|---|--|--|--|---|-----------------|
| Ֆիզ.դաս և առողջ. | 89 | 6.249.000 | 104 | 8.031.000 | 193 | 14.280.000 |
| Սպորտ.մանկ.և կառավարման | 106 | 3.845.400 | 143 | 9.663.000 | 249 | 13.508.400 |
| Հեռակա մ/ա | 82 | 5.922.000 | 103 | 7.180.000 | 185 | 13.102.000 |
| Հեռակա մ/մ | 113 | 9.183.000 | 159 | 11.310.000 | 159 | 20.493.000 |
| Մագիստր. /առկա/ | 7 | 678000 | 22 | 1881000 | 29 | 2559000 |
| Մագիստր. /հեռակա/ | | | 4 | 323000 | 4 | 323000 |

Ինստիտուտն այլ կազմակերպություններին փոխանցում է լրղավազանի վարձակալության վճար՝ 2016-ին՝ 1550000 դրամ, 2017-ին՝ 750000 դրամ, «Սպարտակ» մարզադաշտի համար 2016-ին՝ 943000 դրամ և 2017-ին՝ 317000 դրամ:

7.ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Որակի ապահովման բաժինը 2016 – 2017 ուստարվա գործունեության ընթացքում իրականացրել է պլանով նախատեսված բոլոր գործողությունները:

Բաժինը 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացրել է հետևյալ աշխատանքները:

Մասնավորապես՝

1. **Հավատարմագրում.** 2015թ. սեպտեմբերի 5-ին ՈԱԱԿ հիմնադրամին ներկայացվեց «Ինստիտուցիոնալ հավատարմագրման» համար նախատեսված հայտը: Ինստիտուտում ձևավորված ՈԱ աշխատանքային խմբերի կողմից իրականացված մեծածավալ աշխատանքի շնորհիվ 2016թ. հոկտեմբերի 19-ին «Հավատարմագրման հանձնաժողովի» կողմից «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին շնորհվեց հավատարմագրում 4 տարի ժամկետով: Հանձնաժողովի կողմից ներկայացվել էր 53 առաջարկություններ և դիտարկումներ հայտի 10 չափանիշների վերաբերյալ: Գործող ՈԱ մասնագիտական աշխատանքային խմբի կողմից մշակվեց և ՈԱԱԿ հիմնադրամ ներկայացվեց «Թերությունների վերացման պլան ժամանակացույցը» բաղկացած 6 կիսամյակներից: Նախատեսված առաջին կիսամյակի համար բոլոր պահանջները իրականացվել են պատշաճ կերպով: Երկրորդ կիսամյակի համար նախատեսված առաջադրանքների մի մասն արդեն իսկ կատարված է, իսկ որոշ կետերի իրականացումն ընթացքի մեջ է: Բաժնի աշխատակիցները ակտիվ համագործակցում են ՈԱԱԿ հիմնադրամի փորձագետների հետ, այն է՝ մասնակցում են տարբեր սեմինարների և աշխատաժողովների: ՈԱ բաժնին կից աշխատանքային խմբի կողմից իրականացվում է ՄԿԾ-ի հավատարմագրման նախապատրաստական աշխատանքները:

2. **Միջազգային փորձի ուսումնասիրում.** 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ 14.12.– 17.12.2016թ. փորձի ուսումնասիրման նպատակով կազմակերպվեց այցելություն Վրաստանի Հանրապետության «Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական ուսումնական համալսարան»: Հանդիպումներ եղան համալսարանի աշխատակազմի ղեկավար՝ Վ.Բոժաձեի, ռեկտոր՝ Գ.Ձագանիայի և Որակի ապահովման բաժնի ղեկավար Մ. Մնատորիշվիլիի հետ: Հանդիպման ընթացքում

քննարկվեցին հատկապես մագիստրոսական կրթական ծրագրի՝ «Սպորտային մենեջմենտ» մասնագիտության ուղղությամբ ուսանողների փոխանակման վերաբերյալ հարցեր: Արդյունքում ստորագրվեց հուշագիր՝ կրկնակի դիպլոմների շնորհման և ուսանողների փոխանակման վերաբերյալ: Արդյունքում՝ 2017թ. մարտին, Վրաստանից փոխանակման ծրագրով մեր իստիտուտում պրակտիկա անցան երկու մագիստրանտ:

Որակի ապահովման բաժնի 2017թ. բյուջեով նախատեսված մայիսի 21 – 26 կազմակերպվեց միջազգային աշխատաժողով: Հրավիրված էր Բելգիայի թագավորության Թոմաս Մոր համալսարանական քոլեջների Որակի ապահովման դեպարտամենտի տնօրեն Հիլդա Շիլսը: Եռօրյա աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացման, դասախոսների և ուսանողների շարժունության կազմակերպման և ապահովմանն առնչվող թեմաներ: Աշխատաժողովին մասնակցում էր նաև ՈԱԱԿ հիմնադրամի հավատարմագրման բաժնի ղեկավար Ա.Մակարյանը: Նա ներկայացրեց մի շարք շնորհանդեսներ Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում տարվող բարեփոխումների վերաբերյալ: Աշխատաժողովի ընթացքում ստորագրվեց եռակողմ համագործակցության հուշագիր՝ Թոմաս Մոր համալսարանի, Թոմաս մոր քոլեջների և ՀՖԿՍՊԻ-ի միջև:

ՈԱԱԿ հիմնադրամի փորձագետ Ա.Մակարյանի հետ միասին նախապատրաստում ենք մեկ կրթական ծրագրի բենչմարքինգի աշխատանքներ իրականացնել Բելգիայի Թոմաս Մոր համալսարանական քոլեջների հետ:

3. Դրամաշնորհային ծրագիր. 23.12.2016թ. ՀՀ ԿԳՆ ԾԻԳ-ի հետ կնքվեց Համաշխարհային բանկի կողմից Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) հատկացված դրամաշնորհային պայմանագիր, 24 ամիս տևողությամբ: Ծրագրի պատասխանատուն Որակի ապահովման բաժինն է: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի կողմից մատուցվող մասնագիտական կրթության և հետազոտական աշխատանքների արդիականացում, բարելավում և որակի բարձրացում, ժամանակակից գիտահետազոտական կենտրոնի ստեղծման միջոցով:

Ծրագրի ընթացքում ակնկալվող արդյունքները՝

- ՀՖԿՍՊԻ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ժամանակակից գիտահետազոտական կենտրոն,

- հետազոտական աշխատանքների կազմակերպման ժամանակակից տեխնիկայով հագեցված սմարթ լսարան,

- արդիական նորագույն տեխնոլոգիաներով հագեցված խորհրդակցությունների սրահ,

- վերամշակված և հաստատված կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ,

- արդիականացված կրթական ծրագրերով և ստեղծված նոր ենթակառուցվածքներով արդյունավետ աշխատելուն պատրաստված գիտամանկավարժական և վարչական աշխատակազմ,

4. ընթացիկ տարվա ընթացքում պլանավորվում է կազմակերպել երկու միջազգային խորհրդակցություն՝ նվիրված մասնագիտական ոլորտի հետազոտական աշխատանքների որակի բարելավմանը:

8 .ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, այս ուստարի ևս Մագիստրատուրայի բաժինն ուսումնական գործընթացը կազմակերպելիս հիմնվել է գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների և հրամանների վրա:

Հաշվետու ուստարում Մագիստրատուրայի ընդունելությունը ընթացել է 2 փուլով և ընդհանուր հաշվարկով ընդունվել են 119 ուսանող բոլոր 9 ուղղություններից: Առաջին փուլով մագիստրատուրա են ընդունվել 48 ուսանող. նրանցից 14-ը՝ անվճար տերկետման իրավունքով, 34-ը՝ անվճար՝ առանց տարկետման իրավունքի: Երկրորդ փուլով մագիստրատուրա են ընդունվել 71 ուսանող, բոլորն էլ վճարովի, առանց տարկետման իրավունքի:

Պետք է նշել, որ մագիստրատուրոսական կրթական համակարգից տարատեսակ պատճառներով հեռացվել են 5 մագիստրանտ: Այսպես՝ առաջին կիսամյակի քննաշրջանին չմասնակցելու և մագիստրոսական թեզի պահանջները չկատարելու պատճառով մագիստրատուրայի առկա ուսուցման անվճար համակարգի, առանց տարկետման իրավունքով ընդունված «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ուղղության մագիստրանտ Նարինե Ռաֆիկի Հայրապետյանը հեռացվել է ինստիտուտից: «Սպորտի հոգեբանություն» կրթական ուղղության վճարովի համակարգի ուսանող Վահան Արտակի Մխիթարյանն այլ բուհ տեղափոխվելու նպատակով առաջին կիսամյակում ազատվել է ինստիտուտից՝ համաձայն իր դիմումի:

«Սպորտի հոգեբանություն» կրթական ուղղության մագիստրանտ Արսեն Ապրեսի Ասլանյանը 2-րդ կիսամյակում անձնական պատճառներից ելնելով դադարեցրել է իր ուսանողական իրավունքները՝ համաձայն իր դիմումի:

Մագիստրատուրայի առկա ուսուցման անվճար համակարգի, տարկետման իրավունքով ընդունված «Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ» կրթական ուղղության անվճար համակարգի մագիստրանտ Աշոտ Առնակի Մեծիկյանը հեռացվել է ինստիտուտից «Գիտամանկավարժական պրակտիկային» չներկայանալու պատճառով: Նույն կրթական ուղղության մագիստրանտ Վահե Հովհաննեսի Մկրտչյանը հեռացվել է ինստիտուտից երկրորդ կիսամյակի քննաշրջանին չմասնակցելու պատճառով:

Հաշվետու ուսումնական տարում բանակից զորացրված մեկ մագիստրանտ վերականգնվել է «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ» կրթական ուղղությունում:

Մագիստրատուրայում 2016-2017 ուստարում սովորել են տարբեր բուհերի 22 շրջանավարտներ:

Ընդհանուր հաշվարկով այս ուսումնական տարում հրամանագրվել է 119 ուսանող և ավարտել 113-ը:

Մագիստրանտ շրջանավարտների քանակը ըստ ուղղությունների.

1. «Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ»՝ 41 մագիստրանտ,
2. «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ»՝ 14 մագիստրանտ,
3. «Մարզական լրագրություն»՝ 5 մագիստրանտ,
4. «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»՝ 25 մագիստրանտ,
5. «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»՝ 5 մագիստրանտ,
6. «Ադապտիվ սպորտ»՝ 2 մագիստրանտ,
7. «Մենեջմենտ»՝ 14 մագիստրանտ,
8. «Մարկետինգ»՝ 4 մագիստրանտ,
9. «Հոգեբանություն»՝ 3 մագիստրանտ:

Ուսումնադաստիարակչական և գիտական աշխատանքներում ընդգրկված են եղել 6 գիտությունների դոկտոր, 14 պրոֆեսոր, 15 դոցենտ, որոնցից՝ 12 գիտությունների թեկնածու, 6 ասիստենտ և 2 դասախոս, ընդամենը՝ 43 դասախոս: Վերջիններս այս կարևոր օղակի համար կատարել են մեծածավալ աշխատանքներ՝ կապված ուսումնական գործընթացի կատարելագործման և ուսուցման որակի բարձրացման հետ:

Ուսումնական գործընթացը, ինչպես նաև ուսանողների հաճախումները, մշտապես վերահսկվել են մագիստրատուրայի բաժնի, ուսումնական մասի և ամբիոնների կողմից: Այս ուսումնական տարվա ընթացքում, շնորհիվ համատեղ աշխատանքի, ուսանողների հաճախումները բավարար կարգավիճակի են:

Կրթության որակի հետ կապված՝ պետք է նշել, որ 2016 թվականի դեկտեմբերի 14-17-ը ՈԱ բաժնի պետ Ա.Գ. Գյոզալյանը և մագիստրատուրայի բաժնի պետ Ա.Գ. Ստեփանյանը գործուղվեցին Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական ուսումնական համալսարան: Գործուղման ընթացքում քննարկվեցին կրկնակի

դիպլոմների շնորհման, մագիստրանտների շարժունության վերաբերյալ հարցերը: Հանդիպման վերջում կնքվեց երկկողմանի համագործակցության հուշագիր, որի արդյունքում ս/թ մարտ ամսին Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի պետական ուսումնական համալսարանի մագիստրատուրայի «Սպորտի մենեջմենտ» մասնագիտությամբ երկու ուսանող իրենց մասնագիտական պրակտիկան անցկացրեցին մեր ինստիտուտում:

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի արդիականության և բովանդակությանը, պետք է նշել, որ մագիստրանտները ըստ իրենց թեզերի ուղղվածության կատարել են ուսումնասիրություններ, հետազոտություններ, ըստ այդմ ստացել ադեկվատ տվյալներ: Ստացված տվյալները համապատասխանաբար մշակել են մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով, ելույթ ունեցել ամբիոնի և ինստիտուտի ուսանողական գիտաժողովում:

2016-2017 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի պաշտպանությունն ընթացավ ըստ հաստատված ձևաչափի՝ հիմքում ունենալով ԿԳ նախարարության և ինստիտուտի ռեկտորատի համապատասխան որոշումները և հրամանները: Թեզերի պաշտպանությունը տեղի է ունեցել ռեկտորատի կողմից հաստատված համապատասխան ժամանակացույցի և ընթացել է մայիսի 15-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության համար ձևավորվեցին քննական հանձնաժողովներ և ըստ կրթական ուղղությունների հրավիրվեցին հանձնաժողովի նախագահներ:

Այսպես՝ «Մարզական լրագրություն» կրթական ուղղության հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում էր Խ.Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ. դոկտոր, պրոֆեսոր՝ Մ.Գիլավյանը: «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Ադապտիվ սպորտ» կրթական ուղղության հանձնաժողովի նախագահն էր ՀԿԽԸ «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոնի տնօրենի բժշկական գծով խորհրդական, բ.գ. թեկնածու Գ.Վ. Մուրադյանը, իսկ «Սպորտ և մարզիկների պատրաստության համակարգ», «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա» և «Ֆիզիկական դաստիարակության տեսություն և տեխնոլոգիաներ» կրթական ուղղությունների գործունեությունը ղեկավարում էր ԿԱԻ ՆՁՊ, Ֆիզիկական կուլտուրայի, Տեխնոլոգիայի և

Անվտանգ կենսագործունեության բաժնի պետ, մ.գ.թ., դոցենտ Հովհաննես Գաբրիելյանը:

Բոլոր կրթական ուղղությունների հանձնաժողովի աշխատանքները սկսվել են առավոտյան ժամը 09³⁰ և ավարտվել 13³⁰:

Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրվել է մասնակցել ընդհանուր թվով 113 մագիստրանտ:

Մագիստրատուրայի թեզի պաշտպանության արդյունքներն ըստ մագիստրոսական կրթական ծրագրի՝ ներկայացված են 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

**Մագիստրատուրայի թեզի պաշտպանության արդյունքներն՝
ըստ մագիստրոսական կրթական ծրագրի**

| ԿՐԹԱԿԱՆ ՈւՂՂՈՒԹՅՈՒՆ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎ | ԿՐՄԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ | | ԳԵՐԱԶԱՆՑ 90-100 միավոր | | ԼԱՎ 80-89 միավոր | | ԲԱՎԱՐԱՐ 60-79 միավոր | | Զեռն ներկայացել | | Թեզի պաշտպ. միջ |
|--------------------------------|---------------|-----------------|--------------|------------------------|--------------|------------------|-------------|----------------------|----------|-----------------|----------|-----------------|
| | | n | % | n | % | n | % | n | % | n | % | |
| Մարզական լրագրություն | 5 | 3 | 60 | 5 | 100 | | | - | - | - | - | 98.6 |
| Առողջարարական ՖԿ՝ կինեզիոլոգիա | 25 | 9 | 36 | 22 | 88 | 3 | 12 | - | - | - | - | 91.12 |
| Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 5 | 1 | 20 | 5 | 100 | | | - | - | - | - | 97.2 |
| Սպորտ և մարզ. պատ. համակարգ | 41 | 15 | 36.59 | 37 | 90.24 | 4 | 9.76 | - | - | - | - | 94.24 |
| Ադապտիվ սպորտ | 2 | 1 | 50 | 2 | 100 | | | - | - | - | - | 100 |
| Ֆիզ. դաս. տես. և տեխնոլոգիա | 14 | 2 | 14.3 | 13 | 92.9 | 1 | 7.1 | - | - | - | - | 97.4 |
| Մենեջմենտ | 14 | 4 | 28.6 | 13 | 92.9 | 1 | 7.1 | - | - | - | - | 96.6 |
| Մարկետինգ | 4 | 1 | 25 | 4 | 100 | | | - | - | - | - | 97.75 |
| Հոգեբանություն | 3 | 1 | 33.3 | 3 | 100 | | | - | - | - | - | 98.67 |
| ԸՆԴՀԱՄԵՆԸ | 113 | 37 | 32.74 | 104 | 92.04 | 9 | 7.96 | - | - | - | - | 96.83 |

9.ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- Օգոստոսի 6-ին ՀՖԿՍՊԻ-ի յոթ ուսանողներ մասնակացեցին «Միասնության ուժը» ուսումնամարզական և ռազմահայրենասիրական հավաքին: ՀՖԿՄԻ-ի ուսանողները խաղերին մասնակցում էին՝ ներկայացնելով «Մոնթեներ» ճակատը: ՀՖԿՄԻ-ի ջոկատը ընդհանուր ճամբարում զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը:
- ՀՖԿՍՊԻ -ի ուսանողական խորհուրդը 2016-ի օգոստոսի 22-28-ը մասնակցեց «Բազե» համայնական երիտասարդական հավաքին: Մեր ինստիտուտի ուսանողները 1-ին տեղը զբաղեցրեցին վոլեյբոլից, հրաձգությունից , լողից, վազքից և սեղանի թենիսից՝ վերջնական հաղթանակ պարգևելով Նարնջագույն ճակատին :
- Սեպտեմբերի 1-15-ը ՈԻԽ նախագահը և գործող հանձնաժողովների ու Ակումբների անդամները հանդիպումներ ունեցան առաջինկուրսեցիների հետ: Հանդիպման նպատակն էր ուսանողներին ծանոթացնել իրենց իրավունքներին, պարտականություններին, ներկայացնել ուսանողական խորհրդի կառուցվածքը և մանրամասն իրազեկել կազմակերպվող միջոցառումների անցկացման մասին:
- Հոկտեմբերի 12-ին «Էրեբունի-Երևան» մայրաքաղաքի օրվան նվիրված միջոցառմանն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև ՀՖԿՍՊԻ-ի ուսանողական խորհուրդը՝ թվով 200 ուսանողներ մասնակցեցին տոնակատարություններին:
- Նոյեմբերի 13-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպանատան հետ համատեղ մեկնարկեց երիտասարդության և ուսանողության առողջ ապրելակերպի շաբաթ: Տեղի ունեցավ վազքի և հեծանվային տարբեր մրցաշարեր: Անհատական վազքի մրցույթում 1-ին, 2-րդ և 3-րդ հորիզոնականները գրավեցին մեր ինստիտուտի ուսանողուհիները:
- Նոյեմբերի 17- ին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտը ուսանողության միջազգային տոնի կապակցությամբ անցկացրեց բազկամարտի համաուսանողական մրցույթ: Մրցույթին մասնակցեցին ՀՀ բոլոր միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների թվով 520

ուսանողներ: Մրցումներին ներկա էր նաև Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ՝ Գագիկ Ծառուկյանը, ով մասնակցեց առաջնության պարզևատրման արարողությանը:

- Նոյեմբերի 25-27 ուսանողական խորհուրդը մասնակցեց Հայաստանի համապետական ուսանողական առաջին խորհրդաժողովին:
- Փետրվարի 13-ին ՀՖԿՍՊԻ-ի հետնաբակում մեծ շուքով նշվեց Տեառնընդառաջի տոնը, որն անցկացավ ազգային պարերով: Կազմակերպչական աշխատանքները կատարեցին ուսանողական խորհրդի անդամները:
- Փետրվարի 26-ին տեղի ունեցավ մեծ տոնախմբություն Բուն բարեկենդանի առթիվ: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողական խորհրդի անդամները մեծ ոգևորությամբ միացան նախաձեռնությանը՝ մասնակցելով տոնական շքերթին:
- Մարտի 1-3-ը ՀՖԿՍՊԻ-ն մասնակցեց «Կրթություն XXI դար» միջազգային ցուցահանդեսին, որին մասնակցում էին ավելի քան 70 կրթական կազմակերպություն: ՀՖԿՍՊԻ-ի տաղավարում ներկայացված ինստիտուտի հարուստ և ներկայանալի փորձը մեծ հետաքրքրություն առաջացրեց հյուրերի համար, ինչը հնարավորություն ընձեռեց բուհի ներկայացուցիչներին համառոտ ներկայացնել արված աշխատանքն ու ապագա ծրագրերը:
- Մարտի 8-ին մայրության և գեղեցկության տոնի առիթով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողական խորհրդի անդամները, պատվելով բոլոր ամբիոններով, ծաղիկներով շնորհավորեցին ինստիտուտի բոլոր կանանց և աղջիկներին:
- Ապրիլի 6-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամը ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ իրականացրեց ծրագիր՝ ապահովելով կրթաթոշակով 2016 թվականի ապրիլյան պատերազմի ընթացքում մարտական հերթապահություն անցկացրած ուսանողներին (37 ուսանող):

- Ապրիլի 18-ին ՀՖԿՍՊԻ-ում նշվեց Սուրբ զատիկը: ՀՖԿՍՊԻ-ի ռեկտոր Վահրամ Առաքելյանի գլխավորությամբ տոնական սեղանի շուրջ էին հավաքվել բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները: Տոնը նշվեց ազգային մոտիվներով:
- Ապրիլի 23-ին տեղի ունեցավ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ջահերով երթը, որին իրենց մասնակցությունն ունեցան նաև ուսանողական խորհրդի անդամները:
- Ապրիլի 25-27-ը ՀՖԿՍՊԻ-ում անցկացվեց «Ռեկտորի գավաթ» ֆուտբոլի I մրցաշարը, որի առաջնային նպատակն էր՝ նպաստել մասսայական սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորմանը և ընկերական-բարեկամական կապերի ամրապնդմանը բուհի աշխատակիցների միջև:
- Մայիսի 12-14-ը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնել էր Ստեփանակերտ, որտեղ հաջողությամբ տրվեց ՀՖԿՍՊԻ-ի և Ստեփանակերտի քաղաքապետարանի 2017-2020թ.թ. համագործակցության, փորձի փոխանակման ծրագրի մեկնարկը:

10.ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 186.670 միավոր գիրք: Այս ուսումնական տարում ստացել ենք 1242 կտոր գիրք: Անհատի կողմից նվիրատվության կարգով ստացել ենք 440 գիրք: Նվիրատվության գրքերը հիմնականում հայերեն և ռուսերեն գեղարվեստական գրականություն էր: Ստացել ենք գրականություն՝ անատոմիայից, մարմնամարզությունից, մանկավարժությունից, բուժական ֆիզկուլտուրայից, աթլետիկայից, մարզախաղերից, կենսամեխանիկայից և ադապտիվ ֆիզկուլտուրայից:

Նշված գրքերը եղել են նվիրատվություններ դասախոսների կողմից.

Դասագիրք՝ 13 օրինակ,

Ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 357,

Ուսումնական ձեռնարկ՝ 200,

Սեղմագիր՝ 18:

Համաձայն ինստիտուտի ռեկտորատի 2017թ.-ի մարտի 30-ի N 86 հրամանի, սպասարկման բաժինը վերականգնում է կորցրած գրքերը:

Կորցրած գրքերի փոխարեն՝ 100 օրինակ, վերատպված՝ 134 օրինակ:

Գրադարանն ունի հետևյալ գրականության անհրաժեշտությունը՝

Լալայան Ա., ՈՒսուցիչ,

Պապանյան Գ.Մ., Բեգիդովա Տ.Պ., Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի հիմունքներ,

Գ.Հ.Ճաղարյան, Բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ,

Հարությունյան Ա., Կոփում:

Նոր գրականությունը կոմպլեկտավորվում է, կատարվում է գրքերի գրանցում համապատասխան գրքամատյաններում: Գրանցված գրքերի վրա գրվում են բաժիններն ըստ մասնագիտության: Գրվում են ֆորմուլյարներ, գրքերի քարտեր, որոնք տեղադրվում են քարտարաններում ըստ բաժինների: Նոր գրականությունը գրանցվելուց և մշակվելուց հետո տեղադրվում է գրապահոցի համապատասխան բաժիններում:

Գրադարանն ունի 2879 ընթերցող:

Այդ թվում՝

| | |
|----------------|-------------------|
| I կուրս՝ 224 | հեռակա՝ 1400 |
| II կուրս՝ 354 | մագիստրատուրա՝ 86 |
| III կուրս՝ 280 | ասպիրանտուրա՝ 6 |
| IV կուրս՝ 188 | այլ աշխատող՝ 2 |
| | աշխատող՝ 339 : |

Գրադարան հաճախողների թիվը 31820 է, ընթերցասարահ՝ 24000:

Գրադարանը բաժանորդագրվում է 10 անուն ամսագիր, որը կազմում է 1085600 դր.: Բաժանորդագրվել ենք նոր ամսագիր՝ “Спортивный психолог”, որի անհրաժեշտությունն ուներ ինստիտուտի հոգեբանության ամբիոնը:

Տարեվերջում լույս տեսած ամսագրերի ու թերթերի հավաքածուները տրվել են կազմարարին՝ կազմելու և կոմպլեկտավորելու:

Գրադարանի ամբողջ գրքային ֆոնդը մուտքագրվել է համակարգիչ: Համակարգիչ են մուտքագրվում և պարբերաբար թարմացվում դասախոսների կողմից տրամադրված էլեկտրոնային դասախոսությունները: Կատարվում է նաև էլեկտրոնային գրադարանի համալրում նոր գրքերով: Այժմ էլեկտրոնային գրքերի քանակը 134-ն է: Ինստիտուտի էլեկտրոնային գրադարանը համալրվում է նոր գրքերով և ուսանողների ավարտական աշխատանքներով ու մագիստրոսական թեզերով:

Գրադարանը համագործակցում է Ազգային գրադարանի միջգրադարանային բաժնի հետ: Ազգային գրադարանին տրվել է ինստիտուտի դասախոսների կողմից հրատարակված, նոր լույս տեսած 2 օրինակ գիրք:

Ազգային գրադարանին ներկայացվել է գրադարանային տարեկան հաշվետվության ցուցանիշները:

Գրադարանը պարբերաբար նվիրատվություն է անում սահմանամերձ զորամասերին և Ղարաբաղի սպորտդպրոցներին:

Ընթերցարանում ստեղծվում է «Պրակտիկայի անկյուն» խորագրով գրքերի ցուցադրում: Նոր ստացված գրականության ցուցադրում ցուցափեղկում:

Քարտարաններից հանվել են ակտավորված գրքերի քարտերը, ակտավորվել է մատյաններում դուրս գրված գրականությունը: Կատարվել է քարտարանների քարտերի

ստուգում, զտում, համեմատում գրապահոցում եղած գրքային ֆոնդի հետ: Գրապահոցում տարվա ընթացքում կատարվում է հանձնած գրքերի տեղադրում:

Տարեվերջում կազմվում է տարեկան պլան, հաշվետվություն: Համապատասխան աշխատանքներ է կատարվում ուշացած գրականությունը հետ վերադարձնելու գործում:

11. ՍՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Սոցիալ-դաստիարակչական աշխատանքներ տարվա ընթացքում եղել են ռեկտարատի, ֆակուլտետների, ամբիոնների, արհկոմի, ուսանողական խորհրդի խորհրդատուների, առանձին դասախոսների ուշադրության կենտրոնում:

Արդեն ավանդույթ է դարձել ամեն տարի սեպտեմբերի 1-ին հանդիսությամբ նշել գիտելիքի և կրթության օրը: Հաշվետու տարում նման արարողությանը ներկա էին Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա.Ռ.Քարամյանը:

Ուսումնական տարվա ընթացքում բոլոր ամբիոններում և մասնագիտական խմբերում անցկացվել են մի քանի տասնյակ արտադրական խորհրդակցություններ՝ հագուստ, պատշաճ վարք, հարգանք միմյանց նկատմամբ, հաճախումներ, ուշացումներ, մոդուլային աշխատանքների պահանջներ և ինստիտուտում գործող էթիկայի կանոնների վերաբերյալ և այլն: Բացի այդ, քննական շրջաններից առաջ դասախոսները համապատասխան խմբերում անցկացրել են զրույցներ՝ հատկապես 1-ին կուրսեցիների հետ՝ քննությունների և ստուգարքների անցկացման կարգուկանոնի վերաբերյալ: Ավանդույթ է դարձել դպրոցական պրակտիկայի ընթացքում աշակերտների այցը՝ բուհ, թանգարան, ամբիոններ, մարզակառույցներ և այլնի հետ:

Դիտարկումները վկայում են, որ առավել արդյունավետ են, երբ արտադրական խորհրդակցություններն անցկացվում են համատեղ հարակից ամբիոններում (ֆիզիոլոգիա, ըմբշամարտ, մարզախաղեր, ԱՖԿ, ծանրամարտ և այլն): Արդյունավետ են նաև արտադրական խորհրդակցությունների անցկացումը ծնողների ներկայությամբ (ֆուտբոլ, կիրառական մարզաձևերի և այլ ամբիոններ):

Պրոֆեսոր Ս.Հովեյանի ղեկավարությամբ ԱՖԿ ամբիոնի ուսանող-կամավորականները տարբեր ռեգիոններում մարդասիրական ու հասարակական աշխատանքներ են կատարել հաշմանդամների շրջանում (հայկական հատուկ օլիմպիադաներ, մրցաշարեր, առանձին մարզաձևերից մրցումներ, գործնական դասեր՝ հատուկ դպրոցներում և այլն):

Սոցիալ-դաստիարակչական աշխատանքները ներառել են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ շաբաթօրյակներ, էքսկուրսիաներ, դասեր, հեռահար հաղորդակցություններ, հանդիպումներ, նախադպրոցական հիմնարկներ :

12. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ինստիտուտի գիտական խորհրդի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ուղղված էր ինստիտուտի հետագա ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական և մարզական աշխատանքների որակի բարելավմանը, որը պայմանավորված էր բարձրագույն մասնագիտության կրթական ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործմամբ:

Հաշվետու տարում լավել են հաշվետվություններ ինստիտուտի ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, մարզական, ֆինանսական գործունեության, կրթական համակարգի որակի ապահովման, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, մագիստրատուրայի ուսումնական գործընթացի անցկացման, մագիստրական ատենախոսությունների և ավարտական աշխատանքների որակի վերաբերյալ:

Գիտական խորհրդի նիստերում ուսումնասիրվել և ամփոփվել են «ՖԴՏ և մեթեդիկա», «Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի» ամբիոնների կատարած ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, մարզական աշխատանքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վիճակը ՖԴԱՏ ֆակուլտետի ամբիոններում: Քննարկվել են և որոշումներ են կայացվել 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանների, ինչպես նաև ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:

Հաշվետու տարում ամփոփվել են մանկավարժական, մասնագիտական, կլինիկական և մագիստրատուրայի գիտահետազոտական պրակտիկայի արդյունքները յուրաքանչյուր կիսամյակում: Հաստատվել են տարբեր առարկաների նոր ուսումնական ծրագրերը՝ դրանք առավելագույնս մոտեցնելով եվրոպական պահանջներին:

Հաշվետու ժամանակաշրջանում պրոֆեսորադասախոսական կազմին շնորհվել է 1 պրոֆեսորի և 2 դոցենտի գիտական կոչումներ:

Գիտական խորհուրդը անդրադարձել է նախորդ ուսումնական տարվա որոշումների կատարմանը (31.03.2016թ.և 29.01.2016թ.): Ուշադրության կենտրոնում է եղել երիտասարդ դասախոսների գիտամանկավարժական գործունեությունը, ինչպես նաև ասպիրանտների և հայցորդների աշխատանքային պլանների կատարումը:

Համաձայն 2016-2017 ուստարվա գիտական խորհրդի պլանի՝ անցկացվել են գիտական խորհրդի 11 նիստեր, որտեղ քննարկվել են շուրջ 35 տարաբնույթ հարցեր,

որոնց վերաբերյալ ընդունվել են համապատասխան որոշումներ և առաջարկություններ,
սահմանվել է հսկողություն՝ ընդունված որոշումների իրականացման համար:

13.ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում Արհեստակցական կազմակերպությունը գործել է ըստ իր կանոնադրության համաձայն:

Արհեստակցական կազմակերպությունը՝ իր կանոնադրության համաձայն անցկացնում է ամենամսյա բյուրայի նիստ ինստիտուտի աշխատակիցներից ընտրված 9 անդամներով, որտեղ քննարկվում են տվյալ ամսում կատարվելիք աշխատանքները:

Կազմակերպությունը նաև ամեն ամիս ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում կենտրոն հարկային տեսչությունում:

Արհեստակցական կազմակերպությունը նշված ժամանակահատվածում կազմակերպել է աշխատակիցների համար միջոցառումներ, այդ թվում՝ պետական և ազգային տոների նշում և անցկացում, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և ավարտին նվիրված հանդիսավոր միջոցառումներ:

Արհեստակցական կազմակերպության կողմից նշվել են ինստիտուտի 54 երկարամյա աշխատակիցների ծննդյան հոբելյանները, յուրաքանչյուրին տրվել է հուշանվերներ:

Կազմակերպությունը թե ինստիտուտի աշխատակիցներին, թե նրանց հարազատների դժբախտության առիթով կազմակերպել է այցելություններ, բերելով բարոյական և նյութական աջակցություն և աշխատակիցներին, և նրանց ընտանիքներին:

Կազմակերպությունը քաղաքապետարանի և թաղապետարանի հետ համատեղ տարվա ընթացքում անցկացնում է շաբաթօրյակներ:

Տարվա ընթացքում արհեստակցական կազմակերպության կողմից անցկացվող ամենամսյա բյուրոյի նիստերի ժամանակ քննարկվում են ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացնած դրամական օգնության դիմումները:

Ինստիտուտի, սկսած սպասարկման օղակներից մինչև պրոֆեսորադասախոսական անձնակազմ, այս տարի շուրջ 35 աշխատակիցների տրվել է դրամական օգնություններ:

Այս տարի շատ են եղել աշխատողների՝ առողջական խնդիրների դեպքում տրվող դրամական օգնությունները:

Այս տարի ամբիոններից ներկայացվել են ցուցակներ՝ ամբիոնների աշխատակիցների ստորագրությամբ, որոնք ցանկություն են հայտնել բաժանորդագրվելու «Մարզաշխարհ» շաբաթաթերթը: Արհեստակցական կազմակերպությունն իր միջոցներից շուրջ 165 աշխատակցի համար տարեկան փոխանցել է 8000 դրամ թերթի բաժանորդագրության համար:

Կազմակերպությունը ավանդույթ է դարձրել ամեն տարի ինստիտուտի կանանց տոնի նշումը՝ այդ օրը փոքրիկ տոն դարձնելով նրանց համար:

Տարվա ընթացքում բաժանվել են թատրոնի, համերգային ծրագրերի տոմսեր և այլն:

Հանգստի նպատակով ամառային արձակուրդներին ինստիտուտի շուրջ 50 աշխատակիցների և նրանց հարազատների համար գեղջ գներով տրամադրվել են «Հանքավան» և «Ծաղկաձոր» հանգստյան տան ուղեգրեր:

Կազմակերպվել են հյուրասիրություններ, կուլտմասսայական միջոցառումներ:

Երկարամյա և նախարարության կողմից ճանաչված լավագույն աշխատակիցներին տրվել են դրամական օգնություններ:

Ամանորի նվիրված ներկայացման շուրջ 400 տոմս է բաժանվել ինստիտուտի վարչատնտեսական բաժնից մինչև պրոֆեսորադասախոսական անձնակազմի երեխաներին և թոռներին:

Ուսումնական տարին ամփոփվել է արհեստակցական կազմակերպության ընդլայնված նիստով, որտեղ կազմակերպության նախագահը ներկաներին տեղեկացրել է տարվա ընթացքում կազմակերպության կատարած աշխատանքները, իսկ վերստուգիչ հանձնաժողովի նախագահը՝ հաշվետու տարում կազմակերպության կատարած ֆինանսական ծախսերը:

14. ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «ՖԻՄԱ» հասարակական կազմակերպության վարչությունը, սերտ համագործակցելով ինստիտուտի ռեկտորատի, ՀՀ Կրթության և գիտության նախարարության, Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, հասարակական, քաղաքական կազմակերպությունների և անհատ անձանց հետ, մշակել է 2017 թ. ինստիտուտի մարզական և մասսայական միջոցառումների օրացուցային պլանը, որտեղ արտացոլված է աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, ՀՀ առաջնությունների, ուսանողական խաղերի, այնպես էլ ինստիտուտի կողմից անցկացվելիք բոլոր մարզական և մասսայական միջոցառումների անցկացման ցանկը և ժամկետները:

Համաձայն «ՖԻՄԱ» ՀԿ կանոնադրության՝ 3 ամիսը մեկ անգամ անցկացվել է վարչության նիստ, որտեղ պարբերաբար քննարկվել են ինստիտուտի հավաքական թիմերի և առանձին մարզիկների մրցումների նախապատրաստման, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցաշարերի, ուսանողական խաղերի և ՀՀ տարբեր մասշտաբի մրցումների մասնակցության, սպորտային արդյունքների վերլուծության, ինստիտուտի մարզական-մասսայական միջոցառումների կազմակերպման, 10 լավագույն մարզիկների ընտրության, առավել աչքի ընկած մարզիկների և մարզիչների խրախուսման, մարզաբազաների կահավորման, հանդերձանքի և գույքի ձեռքբերման, հավաքական թիմերի համար ուսումնամարզական հավաքների կազմակերպման, նրանց ՀՀ առաջնություններին գործուղման, կարգապահական և կազմակերպչական բազմաթիվ հարցեր:

Գործնական ամբիոնների կողմից կիսամյակը մեկ անցկացվում է մասնագիտացող ուսանողների որակավորման մրցումներ, որի առանցքային խնդիրներից մեկն էլ բաց առաջնություններն են:

2016-2017 ուստարվա ընթացքում կազմակերպվել են հուշամրցաշարեր՝ նվիրված վաստակաշատ աշխատակիցների և զոհված ազատամարտիկների հիշատակին:

2017 թ. առաջին անգամ տեսական և գործնական ամբիոնների դասախոսների մասնակցությամբ անցկացվել է ֆուտզալի մրցաշար^a «Ռեկտորի գավաթ» անվամբ:

Ինստիտուտի հավաքական թիմերը և անհատ մարզիկները մասնակցել են ՀՀ բոլոր առաջնություններին, միջազգային մրցաշարերի, Եվրոպայի և աշխարհի առաջնությունների, որտեղ մասնակիցների թիվը 285 էր: ՀՀ առաջնություններին մասնակցել է 173 մարզիկ, Եվրոպայի և աշխարհի առաջնություններին՝ 23 մարզիկ, ուսանողական խաղերին՝ 55 մարզիկ, միջազգային տարբեր մրցաշարերի մասնակցել են 34 մարզիկ:

Հանրապետության հավաքական թիմերում մեր ուսանողներից ընդգրկված են 104 ուսանող (տես՝ աղյուսակ 1):

Ինստիտուտի պրոֆեսորասախոսական անձնակազմն ակտիվ մասնակցություն է ունենում հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տարվող գիտական, մեթոդական և ժամանակակից մարզման մեթոդների կիրառման աշխատանքներին:

Առաջատար մարզիչ-մասնագետների գերակշիռ մասը մշտական համագործակցում է մանկապատանեկան մարզադպրոցների հետ՝ ցուցաբերելով մեթոդական և գործնական օգնություն:

Հանրապետության մրցավարական հանձնաժողովների կազմում ընդգրկված են 66 մրցավարներ, որից աթլետիկա՝ 5, ըմբշամարտի բոլոր ձևերից՝ 14, լող՝ 7, մարմնամարզություն՝ 6, մարզախաղեր՝ 13, ծանրամարտ՝ 5 բռնցքամարտ՝ 3, սուսերամարտ՝ 2, ֆուտբոլ՝ 3, շախմատ՝ 2, կիրառական մարզաձևեր՝ 6:

Սպորտային ֆեդերացիայի անդամներ են 46-ը, որից աթլետիկա՝ 6, ըմբշամարտի բոլոր ձևերից՝ 11, լող՝ 4, մարմնամարզություն՝ 3, մարզախաղեր՝ 9, ծանրամարտ՝ 5, բռնցքամարտ՝ 2, սուսերամարտ՝ 1, ֆուտբոլ՝ 1, կիրառական՝ 3, շախմատ՝ 1:

ՀԱՕԿ-ի անդամները 8-ն են:

Մարզական ակումբը, սերտ համագործակցելով ռեկտորատի, պետական, իշխանական կառավարման մարմինների հետ, փորձում է վերականգնել կապերը արտասահմանյան երկրների ֆիզկուլտուրայի ինստիտուտների հետ՝ շեշտը դնելով Իրանի Իսլամական Հանրապետության, Վրաստանի և Ռուսաստանի մի շարք քաղաքների վրա՝ համատեղ անցկացնելու միջազգային ընկերական հանդիպումներ, մասնագետների որակավորումը բարձրացնելու սեմինարներ, խորհրդակցություններ՝ ուսումնասիրելով հայրենական և արտասահմանյան առաջատար փորձը:

2017-2018 ուստարում սպորտային-մասսայական աշխատանքները պատշաճ կերպով կազմակերպելու և անցկացնելու նպատակով առաջարկում եմ.

1. Մրցումների նախաշեմին կազմակերպել ուսումնամարզական հավաքներ՝ հավաքական թիմերի համար:

2. Հավաքական թիմերի մարզիչներին և մարզիկներին ապահովել մարզահագուստով:

3. Մարզաբազաները վերազինել արդիական մարզագույքով:

4. Վարձատրել հավաքական թիմերի հետ աշխատող մարզիչներին:

5. Դասերից դուրս ժամերին մարզաբազաների շահագործումը դնել «ՖԻՄԱ»-ի հսկողության տակ:

**2016-2017 ուստարում մարզիկների մարզական պատրաստվածությունը՝ ըստ
մարզաձևերի**

| | Մարզաձևը | Միջ. կարգի ՍԿ | Սպորտի կարգվետ | Սպորտի կարգ. թեկն. | Առաջին կարգ. | ՀՀ հավ. թիվի անդամ |
|-----|-----------------|------------------------------|-------------------|-----------------------|--------------|--------------------------|
| 1. | Աթլետիկա | | | | 6 | 4 |
| 2. | Ծանրամարտ | 7 | 12 | 10 | | 12 |
| 3. | Բռնցքամարտ | 2 | 5 | 15 | | 9 |
| 4. | Սուսերամարտ | | | 2 | | 3 |
| 5. | Հ/հ ըմբշամարտ | 2 | 3 | 5 | 20 | 6 |
| 6. | Ազատ ըմբշամարտ | | 3 | 6 | 15 | 7 |
| 7. | Ձյուղո | | 8 | 3 | 5 | 6 |
| 8. | Սամբո | | 5 | 3 | 4 | 10 |
| 9. | Կարատե դո | 29 սև գոտի, 15 գունավոր գոտի | | | | 1 |
| 10. | Սպ. մարմնամարզ | | 10 | 3 | | 2 |
| 11. | Ակրորատիկա | | 2 | 1 | 1 | 1 |
| 12. | Գեղ.մարմնամարզ. | | 4 | 1 | | 1 |
| 13. | Լող | 1 | 2 | | 7 | 6 |
| 14. | Ջրացատկ | | | | | |
| 15. | Թիավարություն | | | | | |
| 16. | Դահուկասպորտ | | 4 | | 4 | 2 |
| 17. | Հեծանվասպորտ | 2 | 5 | | 2 | 3 |
| 18. | Վոլեյբոլ | | 2 | | 3 | 5 |
| 19. | Հանդբոլ | | | | 12 | 8 |
| 20. | Բասկետբոլ | | | | 5 | 5 |
| 21. | Սեղանի թենիս | | 2 | 3 | | 5 |
| 22. | Ֆուտբոլ | | | | | 4 |
| 23. | Շախմատ | | | | | 4 |
| | Ընդամենը | 5 | 53 | 25 | 84 | 104 |

2016-2017 ուստարում աշխարհի, Եվրոպայի, օլիմպիական խաղերի միջազգային քարքեր առաջնությունների մասնակցած ուսանողներն ըստ մարզածների

| | Մարզածեր | Աշխ. առաջ | Եվրոպ առաջ | Միջազ մրց. | Օլ. խաղ | ՀՀ առաջ | Ուսան խաղ | Ընդա մենը |
|-----|------------------|-----------|------------|------------|---------|---------|-----------|-----------|
| 1. | Աթլետիկա | | | | | 7 | | 7 |
| 2. | Ծանրամարտ | 2 | 9 | | | 18 | | 29 |
| 3. | Բռնցքամարտ | | | 3 | | 14 | | 17 |
| 4. | Սուսերամարտ | 1 | | 2 | | 5 | | 8 |
| 5. | ՀՀ ըմբշամարտ | | | 7 | | 7 | | 14 |
| 6. | Ազատ ըմբշամարտ | | | 5 | | 11 | | 16 |
| 7. | Ձյուղո | | | | | 23 | 7 | 30 |
| 8. | Սամբո | | 5 | | | 13 | | 18 |
| 9. | Կարատեդո | | 1 | 1 | | 13 | 1 | 16 |
| 10. | Սպ. մարմնամարզ | | 2 | 2 | | | | 4 |
| 11. | Ակրորատիկա | | | | | | | |
| 12. | Գեղ. մարմնամարզ. | | | | | | | |
| 13. | Լող | | | | | 6 | | 6 |
| 14. | Ջրացատկ | | | | | | | |
| 15. | Թիավարություն | | | | | | | |
| 16. | Դահուկասպորտ | | 1 | 8 | | 2 | | 11 |
| 17. | Հեծանվասպորտ | | | | | 2 | | 2 |
| 18. | Վոլեյբոլ | | | 6 | | 10 | 10 | 26 |
| 19. | Հանդբոլ | | | | | 12 | | 12 |
| 20. | Բասկետբոլ | | | | | | 24 | 24 |
| 21. | Սեղանի թենիս | | | | | 4 | 3 | 7 |
| 22. | Ֆուտբոլ | | | | | 20 | 10 | 30 |
| 23. | Շախմատ | 2 | | | | 6 | | 8 |
| | Ընդամենը | 5 | 18 | 34 | | 173 | 55 | 285 |

15. ԲԺՇԿԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ինստիտուտի բժշկական ծառայությունը համալրված է հետևյալ հաստիքներով՝ 4 բժիշկ, 6 բուժքույր, 1 մատենավար, 1 սանիտար: Ամբուլատորիայի աշխատակիցները բաշխված են այնպես, որ բժշկական սպասարկումը կատարվում է ինստիտուտի բոլոր ուսումնամարզական պարապմունքների ժամանակ, բոլոր մարզասրահներում և մարզահրապարակներում:

Սանիտարականխարգելիչ և բուժական աշխատանքներ

Ինստիտուտի բժշկական անձնակազմի կողմից սպասարկվել են ինստիտուտի բոլոր ուսումնամարզական պարապմունքները, մրցումները: Հետևողականորեն սանիտարական վերահսկման են ենթարկվել ինստիտուտի բոլոր տարածքները և ուսումնական շենքերը: Ստուգման ընթացքում կցված բժիշկների կողմից տրվել են ցուցումներ ի հայտ բերված թերությունների վերաբերյալ, որոնք և ժամանակին վերացվել են:

Ինստիտուտի սանիտարական վիճակի մասին պարբերաբար տեղյակ է պահվել ինստիտուտի ղեկավարությանը:

Հաշվետու տարում սպասարկվել են առկա ուսուցման ուսանողները: Ուսանողներից բացի, ամբուլատոր սպասարկման են ենթարկվել ինստիտուտի աշխատողները (206 սպասարկում):

Հաշվետու ժամանակահատվածում սպասարկվել է 492 հիվանդ, որոնց ընդհանուր թվի հաճախելիությունը կազմել է 8364, միջին հաճախելիությունը՝ 1.7 անգամ:

Առկա ուսուցման ուսանողներից առաջնային հիվանդությամբ դիմողներն ըստ կուրսերի կազմել են՝ 1-ին կուրս՝ 47%, 2-րդ կուրս՝ 36%, 3-րդ կուրս՝ 10%, 4-րդ կուրս՝ 7%:

Հեռակա ուսանողները բոլոր կուրսերից՝ 21 դիմող:

Առաջնային հիվանդները բնույթով բաշխվել են հետևյալ կերպ՝ ինֆեկցիոն հիվանդներ՝ 15, բրոնխոպնևմոնիա՝ 13, ՍՌՀ (վերին շնչուղիների կատար)՝ 186, անգինա՝ 7, օտիտ՝ 1, ռինիտներ՝ 165, քթի կորեկցիա՝ 20, մաշկային հիվանդություններ՝ 7, վիրաբուժական հիվանդություններ՝ 54 (վիրահատման ենթարկված), վնասվածքներ՝ 26,

այլ հիվանդություններ՝128, ընդամենը՝492: Հիվանդությունների կապակցությամբ ուսանողներին տրվել են բժշկական տեղեկանքներ՝ թվով 382:

Պրոցեդուրավիրակապային կաբինետի կողմից սպասարկվել է 289 դիմող՝տարբեր ցուցումներով՝ներարկում, վիրակապություններ, վերքերի բուժում, արքցեսների բացում, կոմպրեսների ակուպունկտուրա:

Միջին բուժանձնակազմի կողմից ինստիտուտի բուժբազաներում կատարվել է հիվանդների ինքնուրույն ընդունում, նախաբժշկական օգնություն՝ ծավալով 342 ուսանող:

Վնասվածքների բնութագիրը

Ռիսանողների կողմից ստացված բոլոր վնասվածքները բաշխվել են՝ ուսումնամարզական պարապմունքներին՝18%, մրցումներին՝ 13 %, կենցաղային՝79%:

Ըստ մարզածների վնասվածքները բաշխվել են հետևյալ կերպ. մենամարտություն՝47%, ծանրամարտ՝4%, մարմնամարզություն՝2%, խաղային ձևեր՝32%, աթլետիկա՝4% ,այլ ձևեր՝11%

Ռիսումնամարզական պարապմունքների ժամանակ ստացված վնասվածքների վերլուծությունը պարզել է հետևյալ պատճառները՝վարժության կատարման տեխնիկայի խախտումը, ոչ բավարար նախավարժանքը, պարապմունքների տեղի անբավարար ինքնաապահովումը, անբարենպաստ օդերևութաբանական պայմանները (հատկապես աշուն-ձմեռ ժամանակահատվածում), բոլոր վնասվածքները ամբուլատորիայում ֆիքսվում են: Ամբիոններում քննարկվել են ստացված վնասվածքների առաջացման պատճառները:

Ինստիտուտ ընդունվողների բժշկական զննման կազմակերպումը

Բժշկական հանձնաժողովը 2016 թվականի մայիսի 5-ից մինչև հուլիսի 2-ը ապահովել է դիմորդների 361 բժշկական զննում, որոնցից ոչ պիտանի են համարվել 6 դիմող:

Բժշկական քննություն կատարվել է նաև հեռակա ուսուցման բաժնում (294 դիմորդ) և միջպետական պատվերով (11 դիմորդ): Կազմակերպվել է նաև վերականգնվող ուսանողների բուժզննումը՝ հիմնականում ժամկետային ծառայությունը ավարտածների համար:

Բժշկական վերահսկողություն

Կատարված է բժշկավերստուգիչ աշխատանք բոլոր կուրսերի ուսանողների հետ: Հաշվետու տարում ուսանողների առողջական կոպիտ շեղումներ չեն բացահայտվել, բացի բրոնխոպնևմոնիայի 13 դեպքի և կոտրվածքներ՝ 2:

Հիվանդության միջին տևողությունը, կապված մրսածության հետ, կազմել է 5-10 օր, վնասվածքների միջին տևողությունը՝ 15-20 օր, վիրահատություններից հետո՝ 10-21 օր:

Սանիտարալուսավորական աշխատանք

Հաշվետու տարում բժիշկների և բուժքույրերի կողմից կատարվել է սանիտարալուսավորական աշխատանք տարբեր թեմաների շուրջ գրույցների ձևով՝ մարզիկի հիգիենան, աղիքային ինֆեկցիաներ, մարզական վնասվածքներ, սնկային հիվանդությունները և դրանց կանխարգելումը:

Կազմակերպվում է աշխատանք հակադոպինգային քարոզչության ձևով: Ռիսանողները տեսականորեն ծանոթացել են այնպիսի հիվանդությունների դեպքերի, ինչպիսիք են՝ ՁԻԱՀ—ը, մաշկավեներական հիվանդությունները, պաշտպանական միջոցներով կանխարգելումը: Աշխատանքը կատարվել է անհատական կարգով:

Բժշկավերահսկողական հանձնաժողովի աշխատանքը

Հաշվետու ուստարում բժշկական հանձնաժողովի կողմից տարկետում չի տրվել: Ինստիտուտի կադրերի բաժնի հետ համատեղ կազմակերպվել է աշխատակիցների բժշկական զննում Երևան քաղաքի թիվ 4 պոլիկլինիկայում՝ համաձայն կառավարության որոշման: Տարեկան աշխատանքները կազմակերպվել էր՝ համաձայն աշխատանքային պլանի:

16. ԱՐԽԻՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արխիվը գործում է՝ Արխիվային գործի մասին ՀՀ օրենքին, արխիվային գործի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերին ու չափորոշիչ մեթոդական փաստաթղթերին, ինստիտուտի կանոնադրությանը և իր կանոնակարգին համապատասխան:

Աշխատակազմի արխիվը ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է և ենթարկվում է ռեկտորին. արխիվի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ռեկտորի կողմից:

Արխիվի աշխատանքները կատարվում են ինստիտուտում իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին: Արխիվային փաստաթղթերի պահպանության նվազագույն ժամկետներից ավելի պահպանության ժամկետների, այդ թվում՝ նաև մշտական պահպանության մասին որոշումն ընդունվում է փորձագիտական հանձնաժողովի կողմից:

Վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ Կառավարության կողմից արխիվային փաստաթղթերի պահպանության վերաբերյալ փոփոխություն տեղի չի ունեցել:

Հաստատվել է ինստիտուտի արխիվի կանոնադրությունը գիտխորհրդի 31.10.2016թ նիստում:

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին անցնելու կապակցությամբ արխիվացված կարևոր և մշտական ու երկարաժամկետ փաստափղթերը, ինչպես նաև վերջին 5 տարվա ընթացքում արխիվում գտնվող բոլոր փաստաթղթերն ըստ գրքերի քանակի և էջերի քանակի, ինչպես նաև կենտրոնական արխիվում գտնվող ինստիտուտի բոլոր փաստաթղթերը գույքագրվել է ըստ գործող կանոնադրության:

Արխիվ են հանձնվել ինստիտուտի գործունեությամբ առաջացած այն փաստաթղթերը, որոնք ենթակա են հիմնական պահպանման, ինչպես նաև փաստաթղթեր, որոնք պահպանվելու են որոշակի ժամանակահատվածում՝ հիմք ընդունելով ՀՀ արխիվային օրենսգրքը:

Մշտական պահպանվող գործերը մշակվել, գրանցվել են համապատասխան մատյաններում և տեղավորվել մշտական պահպանվող համապատասխան տուփերում:

2017թ. դրությամբ ինստիտուտի արխիվում հիմնական պահպանման գործերի թվաքանակը հետևյալն է՝

- Ինստիտուտի բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացնելու լիցենզիան, Սերիա N 187, N 0024, N 0025,
- Ռեկտորի հրամանագրքեր՝ կադրեր՝ 180, ուսանողներ՝ 123 / ներառյալ 2015թ./
- Շրջանավարտների անձնական գործեր 2997 / ներառյալ 2015թ./
- Աշխատանքից ազատվածների աշխատանքային գրքույկներ 453
- Հաշվապահական քարտեր 406 / ներառյալ 2014թ./
- Մագիստրոսների անձնական գործեր 555 / ներառյալ 2015թ./
- Ասպիրանտների անձնական գործեր 95
- Հեռացված ուսանողների անձնական գործեր ատեստատներով 2165 / ներառյալ 2011թ./
- Հեռացված ուսանողների անձնական գործեր առանց ատեստ. 1725 / ներառյալ 2016թ./
- Հեռակա ֆակուլտետից հեռացված ուս. անձնական քարտերը. 308 / ներառյալ 2016թ./

Հաշվետվություններ 66 / ներառյալ 2011թ./

- Պետական քննական հանձնաժողովի նիստերի արձանագրութ. 208 / ներառյալ 2016թ./
- Պետական քննական հանձնաժողովի գնահատման թերթիկները. 51 / ներառյալ 2016թ./
- Ընդունելության գրանցման մատյաններ. 65 / ներառյալ 2016թ./
- 1952թ. մինչև 1989թ. արտասահման մեկնած շրջանավարտների միջնակարգ կրթության ատեստատները և դիպլոմները. 60
- 1948թ.մինչև1990թ.շրջանավարտների միջնակարգ կրթության ատեստատները. 7950 հատ
- 1980/81թ.ուստարուց սկսած առկա ուսուցման ամփոփագրերը և տեղեկագրերը:

Հանձվել են.

- 2015-2016 ուստարվա ուսանողների և մագիստրոսների պետական քննական հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և գնահատման թերթիկները:
- 2013-2014 ուստարվա շրջանավարտների /բակալավր/ անձնական գործերը:
- 2014-2015թթ. ուստարիների մագիստրոսների անձնական գործերը:
- Տարբեր թվականների հեռացված ուսանողների անձնական գործերը՝ առանց ատեստատների:
- Ընդհանուր բաժնի տարբեր գործունեությունների մատյանները, ելքի և մուտքի գրություններ:
- 2013-2015թթ. ռեկտորի հրամանները՝ աշխատողների և ուսանողների վերաբերյալ:
- Ուսանողների քննական ամփոփագրերը:

Արխիվ են հանձնվել նաև՝

- 2014-2015թթ. բուհ չընդունված դիմորդների անձնական գործերը և գրանցման մատյանները:
- Ամբիոններից՝ ուսումնական պարապմունքների մատյանները, դասախոսների անհատական պլանները, հրամաններ և որոշումներ:

Արխիվ հանձնված բոլոր փաստաթղթերի համար կազմվել են համապատասխան ակտեր:

Այս տարվա ընթացքում արխիվից տրվել են թվով 350 տեղեկանք, 10 դիպլոմի ներդիրներ և 10 դիպլոմի իսկության հաստատում /ապուստիլ/:

Տրվել են նաև 2015-2016 ուստարում վերականգնվող ուսանողների առաջադիմության վերաբերյալ տեղեկանքները:

Բոլոր տեղեկանքները տպվում և համարակալվում են արխիվային մատյաններում:

Եղել են հարցումներ ԱՊՀ-ից և արտերկրից՝ նախկին շրջանավարտների դիպլոմների իսկության վերաբերյալ, ինչպես նաև նախկին աշխատողների մասին տվյալներ, որոնց ժամանակին պատասխանել եմ տեղեկանքի ձևով՝ ընդհանուր բաժնի հետ համագործակցելով՝ ֆաքսով կամ նամակով:

2015-2016 ուստարվա պետական քննությունների արձանագրությունները և գնահատման թերթիկները կոմպլեկտավորելու նպատակով, ռեկտորի գիտությամբ հրավիրվել է կազմարար, որը կազմել է թվով 11 գիրք:

Այժմ արխիվում շարունակվում է շրջանավարտների և աշխատանքից ազատված աշխատողների անձնական գործերի թվայնացման աշխատանքները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գործունեության բոլոր աշխատանքների հետագա բարելավման նպատակով անհրաժեշտ է.

1. Ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքներում խիստ հսկողություն սահմանել նշված թերությունների ժամանակացույցի կազմման վրա:

2. Շարունակել աշխատանքները մայրենի լեզվով մասնագիտական ուսումնամեթոդական նյութեր տպագրելու ուղղությամբ:

3. Վերանայել և եվրոպական կրթական համակարգին համահունչ մշակել նոր ուսումնական ծրագրեր:

4. Շարունակել աշխատանքները գործող կրթական ծրագրերի վերամշակման ուղղությամբ՝ նրանց մոտեցնելով եվրոպական կրթական ծրագրերին:

5. Գալիք ուսումնական տարում ավարտել գործող աշխատանքային ծրագրերի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները և մուտքագրել ընթերցասրահի էլեկտրոնային համակարգ:

6. Օտարերկրյա ուսանողների համար ամբիոններում պատրաստել դասախոսներ՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով մասնագիտական դասընթացներ վարելու նպատակով:

7. Ուսանողական խորհրդին՝ ընդլայնել աշխատանքները՝ ուսանողության շրջանում ապահովելով կրթական գործընթացի թափանցիկությունը:

8. Ամբիոններին՝ բուհում, նոր լաբորատորիաների ձևավորման հետ կապված, հետազոտական աշխատանքների նպատակով ներկայացնել առաջարկություններ:

9. Ստեղծել միջբուհական գիտամանկավարժական օնլայն կապեր «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալսարանների ասոցիացիայի» անդամ բուհերի համապատասխան ամբիոնների և բաժինների միջև:

10. Ուժեղացնել և ընդլայնել կապը մարզական ֆեդերացիաների և գործատուների հետ:

11.Ամբիոններում ընդլայնել աշխատանքները՝ մեթոդական միջոցառումների անցկացման ուղղությամբ՝ կոնֆերանսներ, կլոր սեղաններ, քննարկումներ, սեմինարներ և այլն:

**Հաշվեպվությունը պատրաստել է՝
ուսումնագիտական հարցերի գծով
պրոռեկտոր, պրոֆեսոր՝**

Ա. Գրիգորյանը